ԳԵՎՈՐԳ
ԷՄԻՆ
ԼՈՌ

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

ГЕВОРГ ЭМИН

НОВАЯ ДОРОГА

(На армянском языке)

Ереван, Аргиз, 1949

ԻՄ ԳՈՐԾԸ

Ժամ առաջ կոմունիզմը կերտել
Անձն իմ վիճակը և իմ գործը...

ԻՄ ԳՈՐԾԸ

Ես այնպե՛ս եմ ելնում իմ տնից՝
Կարծես թե մտնում եմ իմ տունը,
Մեր երկրում՝ ամե՛ն ինչ մոտ է ինձ
Ամեն ինչ ինձ սիրով ժպտում է։

Իմ ամեն քայլը երգ է ծնում...
Ահա այս շենքն արդեն շարե՞լ են,
Նոր ջրանցքն արդեն ջուր է բերում,
Մաղկե՞լ են նոր տնկած ծառերը,

Պանդուխտը շինում է նոր տունն իր,
Նոր ե՛րգ է գրել իմ ընկերը,
Ձիավորը նոր սե՛րմ է ցանում ու
Մաքրում է հողից հին արկերը...

Ինչ լա՞վ է, երբ որ դուք տան տե՛ր ես,
Ամեն տեղ զգում ես քո ձեռքը,
Երբ ամեն տեղ ունես քո տեղը
Եվ ուր էլ որ լինես-դու պե՛տք ես։

Ես քայլում եմ, հրճվում ու երգում՝
Մտքով հյուր եմ գնում գալիքին,
Ինչ լա՜վ է երազանքը կյանքում,
Երբ նա ուժ է տալիս քո ձեռքին։

Եվ դիտած ամե՛ն ինչ գալիքից
Ամե՛ն ինչ գալիքով ստուգած,
Դառնում եմ անհագ ու անհանգիստ՝
Ապրելու ներկայում՝ ապագան։

Ես գիտե՛մ իմ գործը մարտական,
Պոետը — գալիքի դեսպա՛նն է,
Թղթակի՛ցը նրա սեփական
Եվ նրա խղճմտանքն ու ձայնը։

Թե՞ կարծում էիք իմ երգը դեռ
Միայն սե՛րն ու սիրո հոգե՛ցն է,
— Ժա՛մ առաջ կոմունիզմը կերտել—
Ահա՛ իմ փառքը և իմ գործը։

1947

ԵՐԱԶ

Երազում տեսա, որ մեռե՛լ եմ...
Իսկ շուրջս
Զվարթ ու
Կենդանի՛,
Համբուրո՞ւմ է մեկն իր աղջկան,
Մյուսը նստած գիրք է կարդում,
Եվ ծաղկած նշենուց մի չքնաղ
Գարնան զովքն է անոմ մի արտույտ։
Խշշում են Զանգուի ջրերը,
Մի աղջիկ ծաղկած մարգն է ջրում,
Երեխան սերտում է դրերը,
Բանաստեղծը նոր ե՛րգ է գրում,
Եվ կարծես չի՞ փոխվել ոչ մի բան,
Նրանից՝
Որ չկամ ես, կյանքում,
Գնո՞ւմ է աշխարհը իր ճամփան
Եվ կարծես ոչինչ չի՞ նկատում...

. . . . . .

Դուք տեսե՞լ եք նման չար երազ,
Բայց գուցե ձեզ համար այդ մե՞կ է
Խայթվածի նման վե՞ր եկ թռա
Անիծած երազի ճամփեքը։
Մեռնե՞լ— այդ դեռ ոչի՞նչ— օրի՛նք է,
Բայց ապրել այս չքնաղ աշխարհում,

Եվ չզգալ, որ կյանքին դու պե՞տք ես՝
Դրա դեմ ի՞նչ է ցավը մահու։
Էլ ինչի՞ս է կյանքն այս աշխարհում,
Երբ չզգա՛մ,
Որ աշխարհն իմ տո՛ւնն է,
Որ ես է՛լ եմ շենքերն այս շարում,
Փոխում այս գետերի հորդ հունը,
Որ կյանքը երգում է իմ ե՛րգն էլ,
Ես՝ կյանքից եմ առնում բառերս,
Որ ե՛ս էլ եմ բացել ճամփեքն այս
Եվ անգամ՝ վառել այս արևը...

Ես գիտեմ, որ այդ լոկ երազ էր,
Բայց մեռա՛ծ լինեմ, թե կենդանի՞,
Իզո՞ւր է շարշարվում երազն այդ—
Միևնո՛ւյնն է,
Նա չի՛ կատարվի։

1917

ՊԱՐՏՔԸ

Ես քայլում եմ մայթով մեր նորոգ,
Եվ մայթը տնքում ու ասում է.—
— Քեզ թեթև են կարծում ու անհոգ,
Բայց ծա՛նր է քո քայլքը ուսին իմ։
Ասա՛, ի՞նչ հոգս ունես քո հոգում,
Ի՞նչ բեռ է կրում քո լուսե սիրտը,
Պատմի՛ր ինձ, ես քո մայրն եմ քնքուշ—
Քո հո՛ղն եմ հայրենի,
Քո գի՛րկն եմ։

Ես քայլում եմ մայթով մեր նորոգ,
Եվ ծաղկած ծառերն ինձ ասում են.—
— Հուզի՞չ են քո երգերը սիրո,
Մենք զգում ենք սրտիդ սարսուռը,
Բայց ինչո՞ւ մենակ ես ու խռով,
Որտե՞ղ է քո սիրած աղջիկը,
Ափսո՞ս է ամեն պահը սիրո՝
Երբ կյանքդ մեր կյանքից էլ քիչ է...

Ես քայլում եմ մայթով մեր նորոգ
Եվ լապտերն իր աչքը թարթում է.—
— Երգերդ լույսերով են ողող
Ինչո՞ւ լուռ ես շրջում մայթում այս,
վե՞ր պահիր գլուխդ ուսերիդ
Եվ լույս տուր,— բայց ժպտա ինձ նման

Այս լուսե, այս պայծառ մայթերին
Չի՞ սազում գլուխը կախ գնալ...

Ես քարե մայթով տուն եմ գալիս
Եվ լուսե լապտերին ասում եմ.
— Երանի՞ քեզ, որ լույս ես տալիս
Եվ ինքդդ չե՞ս այրվում կյանքում այս.
Հոգին ի՞նչ— տրորի՛ր—կլուի.
Ե՛ս պիտի պաշտպանեմ պատիվը,
Որ ծառը բարձրանա ու ծլի
Եվ ղուլդերը շրջեն մայթում այս։

— Դուք ծաղկե՞ք ու վառվե՞ք,— ասում եմ
Մառե՞ր ու լույսեր մեր աշխարհի,
Բայց ես մա՛րդ եմ— աշխարհն իմ տունն է
Եվ հոգսն իմ ուսերին է գալիս։
Չե՞մ կարող ես շրջել դեռ անհոգ
Եվ միայն հրճվել ու հիանալ,
Քանի դեռ արկով ու խավարով
Գեթ մեկը ձեզ փորձի սպառնալ։

1946

ԱՆՑՈՐԴՆԵՐԸ
(Ըստ Մ. Լուկոնինի)

Գարունը քաշել է բոլորին մայթերը,
Անցորդներն անթիվ են, անհամար,
Անծանո՞թ են նրանց քայլվածքն ու դեմքերը
Բայց ոչ ոք օտար չէ ինձ համար։

Ես ամե՛ն անցորդի ճանաչում եմ մոտից
Եվ բոլորն էլ գիտեն ես ո՛վ եմ,
Ահա թե ինչո՛ւ եմ խենթացել կարոտից
Ահա թե ինչո՛ւ եմ գինով եմ։

Ա՜յ, այս կաղ զինվորը,
Նա իմ լա՜վ ընկերն է,
Թեև չե՛նք բարևում մենք իրար,
Սա նա՛ է, ոմ ոտքով հաղթանակն եկել է՝
Բերելով այս գարունը շռայլ։

Իսկ այս հեղ պառա՜վը.—«մայրիկ, մի՛
տրտնջա,
Ես կռվում կորած քո որդի՛ն եմ»,
Սա նա՛ է, որ զոհեց իր որդուն միանուագար,
Որ տեսնի հաղթության հրթիռը։

Կամ թե այս ծերունին, որ արած արևկող,
Տխրում է, որ կյանքը անցել է,

Բոլշևի՞կ էր նա հին, քաջարի մի զինկոմ,
Երբ նո՛ր էր դեռ աչքը բացվել իմ։

Իսկ սա՞, քեզ օտա՞ր է,
— Մելինե՛, մո՞տ եկուր,—
Սա գաղթի մեջ կորած իմ քույրն է,
Երկչո՞տ են քայլերը—նա դեռ չի՞
հավատում,
Որ սա իր երա՛զն է, իր տունն է...

. . . . . .

Ես ինչպե՞ս և որի՞ն ձեզ ցույց տամ
այս երգով՝
Բոլորն իմ ընտանիքն, իմ տո՛ւնն է...
Դրանի՞ց եմ այսպես ես հարբել բերկրանքով
Եվ ամե՛ն անցորդի ժպտում եմ։

1917

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԳ

Աշխարհում ամե՛ն տեղ ծաղիկ կա,
Ամե՛ն տեղ ծաղկունքը ծաղկել են,
Բայց ա՛յդ չէ այս գարնան գաղտնիքը,
Այդ չէ՛ որ ուզում եմ երգել ես։

Ես ուզում եմ այսօր քնարել
Մարդկության տենչած այն գարունը,
Որ երկրիս ուղեկիցն է հավերժ
Եվ ամբողջ աշխարհում գալու է։

Ուզո՞ւմ ես այդ գարնան գալն ղգալ...
Թո՛ղ գործդ մի վայրկյան ու նայիր
Ծաղկե՞լ է մեր երկիրը հսկա՝
Շարժելով նախանձը աշխարհի.

Եվ անգամ այնտե՛ղ, ուր ձմեռ էր
Ու սառել էր հողը սարսափից,
Խշշո՞ւմ են գարնան հորդ ջրերը՝
Դուրս եկած մեր երկրի սուրբ ափից։

Կարկաչո՛ւմ են նրանք Բելգրադում,
Վարշավան սառույցը ջարդե՛լ է,
Բուդապեշտը քո՛ւնն է թոթափում,
Բուխարեստն ու Սոֆիան զարթնե՛լ են։

Եվ անգամ Բեռլինո՛ւմ, որ երեկ
Այս գարնան թշնամին էր դաժան,
Խլրտո՛ւմ է զեփյուռը նորեկ՝
Թափելով չոր սաղարթը աշնան։

Գարո՛ւնն այս... դուք զգո՛ւմ եք նրան
Վարարե՛լ են գարնան ջրերը
Ոչինչ չի՛ կոտրի թափը նրանց
Եվ արդեն անզո՛ր է ձմեռը։

Իջնում է նա հոնաց լեռներից
Եվ օտար աղբը ծո՛վն է թափում
Դղրդո՛ւմ է Պոմպեյը նորից՝
Բռնության կապանքը թոթափում,

Ամպրոպի դղրդից նրա խենթ
Դեղնել է Դեղին ծո՛վը անգամ,
Անզո՛ր են և գետը Խուան-խե
Եվ խարխուլ պարիսպը չինական։

Արշավո՛ւմ է գարունն աշխարհում
Պարզած իր դրոշակը կանաչ,
Ի՞նչ փույթ, թե հո՛ղմ է այն օվկիանում,
Որ հիմա ոչ մե՛ծ է, ոչ խաղա՛ղ։

Ցրբ ծառը բողբոջե՛լ է տենչում
Ոչնչով նրան չե՛ս սպառնա...
Գարնանն այս՝ մարդկությո՛ւնն է կանչում
Եվ նրան ճանապա՛ր կբանա։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Երբ ես աշխարհում աչքս բացի՝
Կյանքի տեղ մա՛հն էր աչքիս առաջ,
Եվ դո՛ւ էիր, որ դեռ նորածին,
Ինձ գաղթի ճամփին թևիդ առած,
Բարուրքս որպես ծաղկի կոկոն
Փրկած հրից ու ծովից արյան,
Բերեցիր կարմիր հողն այս ծաղկող
Ուր նա բացվեց ու ես կյանք առա։

Քանդվել էր տունն իմ, դարձել սամա,
Եվ ընկել հայրքս իր տան շեմքին.
Եվ դո՛ւ էիր, որ ինձ հոր նման,
Մեկնած քո ձեռքը Ռուսաց երկրից,
Սրբեցի՛ր մորքս արցունքն աչի,
Նոր տո՛ւն շինեցիր որբիս համար,
Եվ ձեռքքս տված թուղթ ու գրիչ՝
Առաջին անգամ դպրո՛ց տարար։

Քեզնո՛վ Հայաստանն ինձ պես հարյավ...
Եվ ե՛ս, քո կաթով սնված որդիդ,
Քո դրոշի տակ, ներկված արյամբ,
Քեզ տված զարկը մատաղ սրտիս
Դրա՛խտ դարձրի երկիրն իմ հին
Եվ ազգերի հետ եղբայրացած,

Փառքը հին ու նոր իմ դարերի
Երգեցի հզոր ու բարձրաձայն։

Իսկ երբ պայթեցին ռումբ ու ական,
Երբ արկն առաջին դիպավ սրտիդ,
Որ քանդի տունն իմ հայրենական
Եվ որբ դարձնի ինձ վերստին,
Մի՞թե ես չէի, որ դարերի
Յաստման իմ սրտում ելա մարտի
Կարմիր դրոշին մեր հայրերի
Տված և արյո՛ւնն իմ սերընդի։

Հիմա՛, երբ ձայնը քո Լենինյան
Հաղթ տարածվել է տիեզերքում,
Երբ իմ եղբորն իսկ՝ գաղթում կորած
Դու փրկած բերիր հայրենի տուն,
Երբ մեր երկիրն է տենչում հրաշք
Ով դեռ սարո՛ւկ է, ճո՛րտ է ու մերկ,
Կարո՞ղ եմ տեսնել ուրիշ երազ,
Կամ երգել կյանքում ուրիշ մի երգ։

Մենք միասին ենք կյանքում ծնվել
Եվ սպրել իրար փառքի համար.
Իմ ներշնչումը քո ե՛ռթն է վեհ,
Քո հաղթանակը՝ փառքն իմ անմար։
Ես արյա՛մբ եմ քեզ երդում տվել՝
Լինել երգիչդ ու զինվորդ անմահ,
Ա՛ռ իմ երգն ու իմ սիրտը նվեր՝
Հանուն քո փառքի հողում համայն։

1946

ԵՍԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՅՈՒՇԵՐԻ ՇԻՐԻՄԻ ԱՌԱՋ

Այստե՛ղ, ուր հիմա պուրակ է կանաչ,
Գերեզմանո՞ց է եղել վշտապին
Բայց դու մի՛ տխրի, և մի՛ զարմանա,
Եվ հավատա՛ իմ այս երգին, անգի՛ն.

Նայի՛ր այս կանաչ ու նոր պուրակին
Եվ դու ամեն ինչ կզգա՛ս, կիմանա՛ս,
Այս պուրակի պես մի ամբողջ երկիր
Ծաղկո՞ւմ է հիմա քո աչքի առաջ,

Որ գերեզմանո՞ց կդառնար հնում՝
Թե Հոկտեմբերը նրան չփրկեր...
Իմ այս երգը քեզ լեգե՞նդ է թվում...
Բայց դու մի՛ տխրի իմ անգին ընկեր։

Խոնարհվի՞ր ինձ հետ այս շիրմին մաքուր,
Որ շիրմատումը պուրակ դարձրեց,
Երդվի՞ր նրանց պես պայքարել կյանքում
Եվ նրանց նման այս հողը սիրել,

Եվ թե հարկ լինի՝ նրանց պես կրծքով
Պաշտպանել այս հողն ու կյանքը արդար,
Որ հավե՞րժ ասրի մեր փառքը ծաղկող՝
Այս շիրիմն արած իրեն պատվանդան։

1948 VII Լենինական, Գորիս

ԽԱՐՈՒՅԿԸ

Ղրիմի պիոներներին

Այստեղ, Ղրիմում, ուր ծովն է ծփում,
Եվ կայծկլտում են աստղերը անմար,
Ուր շիրմո՞ւմ անգամ սի՛րտ է տրոփում՝
Ապրելո՞ւ համար, սիրելո՞ւ համար,
Ուր գոտ է ամեն բլուրը կանաչ,
Նախկին խրամատ՝ ամեն մի առու,
Ուր ծաղկունքի մեջ դեռ արկ կա թաղված
Եվ ականնե՞ր են գաշտերից հանում,
Այստեղ, ավերված գյուղոցի առաջ,
Թեժ ճարճատում է մի փոքրիկ խարույկ,
Եվ թիթեռի պես՝ շուրջը ճախր առած՝
Մանուկներն անհոգ երգում են, պարում։

Ես չգիտեմ կա՞ աշխարհում հանգիստ.
Եվ ով-ինչպե՞ս է բառն այդ հասկանում,
Բայց այստեղ ամե՞ն, ամե՞ն մի մանկիկ,
Թեև չի՞ ասում իր լեզվով անուշ,
Սակայն լա՞վ գիտե գինն այս վայելքի,
Գիտե, թե ի՞նչ ենք վճարել նրան,
Եվ գիտե, որ բո՛ցն այս թեժ խարույկի
Պատերազմի խոլ բոցի՞ց է խլված...

...Ես՝ պոետ-հյուրն այս փոքրիկ խարույկի
Ի՞նչ ասեմ նրանց, որ հին չլինի,

Թող պարե՛ն նրանք անհոգ ու հանդիստ,
Իսկ ես և նրա՛նց և ի՛մ ամբոխից,
Ուզում եմ ցասմամբ կրակված սրտով,
Եվ այս խարույկի բոցի պես անխոս,
Ցույց տալ աշխարհին բո՛ցն այս անվրդով,
Եվ ասել մի՛այն բոցեղեն մի խոսք.

—Լսո՞ւմ եք, հե՞յ դո՛ւք, որ այս աշխարհում
Ուզում եք նորից պատերազմ սերել,
Ի՞նչ զենքեր էլ որ ստեղծեք մահու,
Եվ ի՞նչ ազետ էլ փորձեք մեզ բերել,
Չե՞ք երկնի ոչի՞նչ՝ ավելի զորեղ,
Քան բոցն այս՝ խաղաղ հզորությամբ լի...

...Փոքրիկ խարույկն այս լեզվով իր հրե
Դատավճի՞ռն է կարդում ձեր էլի։
1918 VIII Դրիմ.

ԶԻՆՎՈՐԻ ՕՐԱԳՐԻՑ

Արկն, այո, կարող էր վիրավել,
Պատմությունն անվրեպ է սակայն։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

Հիմա, երբ դրսում գարո՞ւն է խաղաղ,
Երբ քարե՞րն անգամ՝ կարծես ծաղկել են,
Հեքիա՞թ են թվում պատերազմ ու մահ
(Թեև ցավո՞ւմ են դեռ իմ վերքերը...)
Սակայն լա՞վ նայիր,
Տեսնո՞ւմ ես, ընկե՛ր,
Մաղիկների նուրբ թերթերն արնել են,
Եվ գո՛տ էր առաջ բլուրն այս շքեղ,
Ուր արածում են անմեղ գառները։
Դեռ մեր դաշտերում, հողը հերկելիս,
Պայթում են երեկ թաղված արկերը,
Եվ պուրակներում անհոգ շրջելիս՝
Իմ սի՞րտն են խոցում քո հենակները...
Մենք հասկանո՛ւմ ենք, ընկե՛ր, իրարու,
Ե՛կ այրված հողն այս քրտինքով ջրենք,
Որ անգամ թաղված սերմերից մահու
Կյանքի ու բախտի ծաղիկներ ծլեն։

1946.

ՁԻՆՎՈՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ով տեսել է մահը ճակատում՝
Նրան կյանքն ավելի է գերում։

... Ես հաղթած դառնում եմ դեպի տուն՝
Կարոտի արցունքն իմ աչքերում։

Փայլո՞ւմ է երկնքում արևը—
— Չէ՞ր եղել նա այսքան լուսեղեն։

Բողբոջո՞ւմ են նորքում ծառերը—
— Այսքան շատ ծաղիկ ե՞րբ էր եղել։

Թեթև՞ են այնպես իմ քայլերը—
—Ի՞նչ տենչ է իմ հոգնած ոտքերում։

Ուզում եմ ամենքին փարվե՛լ ես—
—Որտեղի՞ց այս ուժն իմ ձեռքերում։

***

Ով նայել է մահվան աչքերին՝
Նրան կյանքն ավելի է գերում,

— Իմ աչքո՞ւմն է լույսն այն աչքերի,
Որ երեկ կուրացան դիրքերում։

Ով ո՞տք է կորցրել ճակատում
— Քայլելու տենչն ի՞նձ է մնացել։

Արկն ում ձեռքը տարե՞լ է մարտում
— Ձեռքի ուժն իմ ձեռքի՞ն է անցել։

***

Ով տեսել է մահը ճակատում՝
Նա սիրում է կյանքը առավել,

Ես մի կյա՞նք ունեի այս կյանքում
Եվ մի կյանքքս՝ հազա՞ր է դառել։

Սակայն և դժվա՞ր է ինձ քայլել
Թեև լա՞յն է ճամփան այս նորեկ,

Ով կյանքում կիսատ բան է արել
Մեռնելիս իմ ուսին է թողել։

Ե՛ս պիտի գրեմ այն երգերը,
Որ պոետ ընկերքս չգրեց։

Ե՛ս պիտի գնեմ այն հիմքերը,
Որ բանվոր ընկերքս չդրեց.

Ե՛ս պիտի ծիլերն այն փայփայեմ,
Որ զոհված ընկերքս տնկել է։

... Որ լինեմ արժանի վայելել,
Այն, ինչից որ նրանք զրկվե՛լ են։

1947.

ԵՐԳԵՐ ԳՐՎԱԾ ԳՆԱՑՔՈՒՄ

Եվ անիվներն են մեղմ օրորում
Եվ բարդիները՝ ձեռքով անող,
Գնացքն ինքն էլ է ծույլ օրորվում
Եվ թվում է քեզ մեղկ ու անհոգ,

— Զգույշ կաց սակայն, որ չքնես
Եվ չանցնես իղձիդ կայարանով։

***

Ո՞ր կայարանում իջնես ներքև...
Ամեն կայարան լավ է թվում,
Մեկում ծառեր կան ձիգ ու շքեղ,
Մյուսում սերն է ձեռքով անում,
Ուզում ես էլի՛ ուղիղ ձգիր,
Կամ իջիր հենց այս կայարանում,
Սակայն միշտ հիշիր՝ գծում կյանքի
Լոկ մի՛ մարշրուտ է գնացքն անում։

***

Չլինե՞ս նման այն կայարանին,
Ուր խոտ է բուսնում ժանգոտ գծերում,

Նավահանգստին այն գորշ, ամայի,
Որից ծովն արդեն քաշվել է հեռու

Մեռիր, բայց եղիր միշտ կյանքի գծին,
Անշուք մի խեցի՝ սակայն ծուփափում...

—Ուրիշ կյանք չկա դրանից բացի,
Ուրիշ ինչ լինի՝ դու քե՞զ ես խաբում։

1940—1947.

ԲԱԼԼԱԴ ՊԱՐՏԻԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Ինչ որ տեղ վայում էր դեռ որոտը ահեղ,
Բլինդաժը ծխով լցված էր.
Նստել էր պարտկոմի քարտուղարը ջահել,
Եվ մեկ-մեկ կարդում էր ցուցակը.—
— Բաղալյա՛ն,
— Մուծվա՛ծ է,
— Ժեմա՛յտիս,
— Մուծվա՛ծ է,
— Կարպե՛նկո, մուծե՞լ եք վճարը...
— Ո՛չ, ընկեր քարտուղար, մեր ջոկին ասված էր,
Հրկիզել Թշնամու պաշարը.
Մեկ ամիս մնացինք Թշնամու Թիկունքում,
Օղակման մեջ ընկանք...
— Հերի՛ք է,
— Հարգելի՞ համարել,
— Ո՞նց մուծեր օղակում,
— Հարգելի՛,
Այստե՛ղ տուր կնիքը։
— Իվանո՛վ,
— Այստեղ եմ,
— Մուծվա՞ծ է...
Եվ հանկարծ,
Դղրդում է խուցը ժողովի.

— Ընկերնե՛ր, ժողովը համարում եմ փակված,
Մնացածը հետո...
— Գրոհի՞:

Տատանվո՞ւմ է հողը ականից ու արկից,
Բլինդաժը շիրիմ է դարձել,
Բայց սողում են առաջ ֆաշիստները կրկին,
Եվ արդեն մեր դիրքին են հասել։
— Հանուն մեր մայր հողի, քաջե՞ր, իմ եղբա՛յր,
Ելնում է քարտուղարը ջահել,
Բայց ընկնում է՝ խոցված ականի բեկորից՝
Չտեսած մեր գրոհը ահեղ։
Ընկած է քարտուղարն ականից թշնամու,
Ճակատին՝ մահվան պաղ քրտինքն է,
Բայց մահը մոռացած, նա թղթե՞րն է հանում,
— Հե՞յ, ո՞վ կա... ցուցա՛կը... կնիքը...»
Պայթո՛ւմ են արկերը. ահա և բարձունքը,
Գրավված է ափը Սև Ծովի...
... Եվ գնդի զինկոմը, կուլ տալով արցունքը,
Անցնում է ընհատված ժողովին։
— Երկու նոր դիմո՛ւմ կա— զինկոմը կարդում է,
Երկուսն էլ զոհվածի անունից,
«Ն գնդի պարտկոմին. «Թե ընկնենք մարտում այս,
Խնդրո՛ւմ ենք համարել կոմունիստ»
— Քվեարկե՞լ,
— Հարկ չկա՛,
— Հաստատե՛լ,
— Անցնո՛ւմ են։
Վճարի ստուգո՛ւմն է նորից.

— Թո՛ւմ ես,

— Մուծվա՛ծ է,

— Աբա՛սով,

— Մուծո՛ւմ եմ,

— Պետրոսյա՛ն.

— Չի՛ դարձել գրոհից...

— Տոմսն ո՞ւր է...

Դողացող մատներով բացո՛ւմ են՝
էջերը արյունով ծծվա՛ծ են...
... Զինկոմը գրիչը արյունքով թացում ու,
Շշնջում է կամաց.

— «Մուծվա՛ծ է»։

ՉՐՈՒՅՑ ՄՈՐՍ ՀԵՏ...

Դու լացի միջից ինձ ժպտո՞ւմ ես՝
Մատներդդ զուլպայի ճաղին,
Ինչքա՞ն եմ երազել ես տունն այս,
Ինչքա՞ն եմ քեզ հիշել, մայրի՛կ։
Ինձ թվում էր, թե մի համբույրով
Առել եմ չորս տարվա կարոտդս,
Եվ սրտիս կրկնակի դու մո՛տ ես։
Բայց սիրո՞ւմ եմ քեզ նո՛ր մի սիրով
Չէ՞ որ ես օրի՛ պես քեզ շնչում
Բայց հաճախ քեզ չէի՞ նկատում,
Եվ լալի՞ս էր հոգիս ու զղջում,
Որը հիշում էի քեզ ճակատում...
Հիմա, ինչ գտել եմ ես կրկին՝
Կրկնակի թա՛նկ է ինձ աշխարհում,
Ի՞նչ փույթ, թե կորցացե՞լ եմ մի քիչ
Եվ մանկան պես՝ կրծքիդ չե՞մ փարվում...
Դու դրկում ես անվերջ, փայփայում,
Չե՞ս ուզում էլ տնից հեռանամ,
Դու ասում ես, թե՝ ողջ աշխարհում
Բախտավոր մայր չկա քեզ նման,
Որ շեն է հայրենի մեր տունը
Եվ ողջ է մինուճար քո որդին.
Եվ վախով իմ ճամբան փակում ես
Երբ ուզում եմ ելնել ես ոտքի...

. . . . . .

Դու լացի միջից ինձ ժպտում ես՝
Մոռացած քո վիշտն ու տագնապը,
Բայց ներիր, մայրիկ, ես տրտո՛ւմ եմ,
Ինձ նեղո՞ւմ է այս թանկ կապանքը.
Ե՛ս գիտե՛մ դու ինձ հետ փրկված ես
Եվ ի՛մն են այս կյանքն ու բարիքը,
Հաճելի՞ է հանդիստն այս քաղցր
Երբ հողմը ծնծում է տանիքը,
Բայց հողմը հուշ չէ, որ թերթում է,
Նա կրկի՛ն, կրկին ի՞նձ է կանչում,
Եվ թեև վերքդս դեռ մխում է
Եվ դու էլ փարվում ես, աղաչում,
Բայց կողքիդ չե՛մ կարող մնա՛լ ես
Կոկորդո՞ւմս է այս բախտը մնում,
Ինձ ճակա՛տ է թվում աշխարհը
Եվ մեր տունը՝ թիկունք է թվում...

Ինչ շո՞ւտ ես դու վիշտը մոռանում,
Երբ բախտը քեզ ժպտո՞ւմ է, մայրիկ,
Չէ՞ որ դեռ երեկ, այս աշխարհում
Երբ պայթեց պատերազմը վայրի,
Քանիսի՞ և բա՛խտը և կյանքը,
Որ հավե՞րժ էր թվում այս կյանքում,
Մի զարկով խորտակեց սև արկն ու
Կուլ տվին հրդեհները անկուշտ,
Քեզ նման քանիսի՞ ծեր մորը
Խաչ հանեց ոսոխը արնակոլ...
Թե պատմեմ, մայրիկ, քեզ բոլորն այդ
Կլնդի՞ այս երազը տաքուկ,

Եվ բացած թևերիդ կամարը
Ինձնից վաղ կկանգնես դու ուրբի...
Միթե՞ դո՛ւ ես միայն իմ մայրը
Եվ միայն ե՛ս եմ, մա՛յր, քո որդին...
Կարո՞ղ ես դու բռնել թևերքս,
Կարո՞ղ եմ ես նստել քո կողքին,
Երբ մեր ողջ երկիրը ելել է
Ջնջելու կռվի հետքը նախկին,
Եվ ջրված մինչ մեր սուրբ արյունով
Մարդկության բախտը նո՛ր է ծլում
Երևկվա ոսոխը՝ նոր գույնով
Աշխարհում նոր եղեռն է ծնում...
Լսո՞ւմ ես, հողմն ինչպե՞ս է նվում,
Դու կարծում ես այս հո՞ւշն է միայն,
Նոր կռվի լուրեր է նա բերում՝
Վառոդի բույրը բարկ ու մռայլ,
Երևկվա արկերի բեկորը
Հողում նոր կռվի սե՛րմ է դառել,
Ես պիտի իմանամ թե ո՞վ է
Ուզում այդ սև բերքը ամբարել,
Ո՞ւմ է՝ որ նորոգված այս տունը
Դամբարան է թվում իր ճամփին,
Եվ ո՞վ է գազազում ոնց ցուլը
Մեր կարմիր դրոշի ծփանքից։

Թա՞նկ են քեզ քո տունն ոչ զավակը,
Դու սիրո՞ւմ ես նրանց— ես գիտեմ,
Բայց իմ տունը՝ արար աշխարհքն է,
Եվ ես, որ կռվել եմ ու հաղթել,

Չե՛մ թողնի, որ կրկին աշխարհն այս
Իմ տան պես՝ մոխիրից նոր ծնված
Դառնա նոր մի ռոմբի ավարն ու
Նորից մարդը ցավի մեջ նվա...
Ես ուզում եմ խաղաղ երկինքն այս
Զծածկվի ամպերով էլ մռայլ,
Զծաղրի՞ ռումբը իմ քրտինքը՝
Խառնելով իմ արյունը նրան,
Եվ ա՛յն, ինչ դարերով կերտվել է՝
Ջնջելով այս հողից մի ժամում,
Զստիպի՞, որ մահին օգնեմ ես՝
Թե ապրե՞լ եմ ուզում աշխարհում...
Հասկանո՞ւմ ես մայրիկ, իմ գործը,
Ես լրիվ չեմ արել տակավին,
Չե՛մ ուզում, որ փոքր սիրոցն իր
Մարդն էլի վատողի տակառին,
Որ ցնդի՞ վաղն օդում վայելքն այս
Եվ թվա աշխարհ դալը իզուր...
Ի՞նչ փույթ, թե ցավո՞ւմ է դեռ վերքը
Եվ ինձնից փայփայանք է ուզում...

Ես ջահել եմ, ուժե՛ղ, ագա՛հ եմ,
Դեռ կոկոն են բախտիս վարդերը,
Ես երեկ առաջին անգամն եմ
Համբուրել սիրուհուս շուրթերը,
Ինձ համար մի կյանքը դեռ քիչ է
Ես ուզում եմ լինել դեռ անմահ,
Խլել զենքը մահվան ձեռքից ու
Պատերազմը հավետ մոռանալ,

Բայց ամեն, իմ ամեն մի քայլին
Հենակով կտրում է նա ճամփես...
Մոռանալը ցնո՛ւրք է անմիտ,
Երբ նա կա՛, գալարվում է անտե՛ս...

Չէ՞ որ այս աշխարհում դեռ մո՛ւթ կա
Դեռ կարմիր սահմանից հեռու,
Գալարվո՛ւմ են դավերն ու սուտը
Պատերազմը նոր զենք է կռում,
Եվ եթե նստեմ քո կողքին ես
Ու վերքիս պես երգով նվամ
Կմեկնի՞ նա թաթը երկրին այս,
Որ Մարդու պաշտպա՛նն է միակ
Դեռ նվում է այնտեղ հապիվողը,
Լարում իր վերջին ուժը մեր դեմ,
Եվ ե՛ս, որ եկել եմ այս հողը,
Որ ապրեմ,
Երգեմ, ու կերտեմ,

Ես կրկին կառնեմ վաղն իմ զենքը
Այս ձեռքով՝ որով մուրճ եմ բռնում՝
Կտրելու վերջին այն սև ձեռքը,
Որ կյանքում պատերազմ է ծնում։

***

... Դու լայի միջից ինձ ժպտում ես,
Եվ հանուն թեկուզ քո այս բախտի
Թե թողնեմ վաղն էլի մեր տունը,
Մա՛յր, բարի ճանապարհ ինձ մաղթիր։

1915—1946

ՏԵՔՍՏԻԼ ԳՈՐԾԱԲԱՆՈՒՄ

Անքուն ու անզգայար դաղղահը զարկում է
— Կարո՞ղ ես ասել, թե մի զարկը իզուր է,
Ամեն մի զարկի հետ մի թե՛լ է հատվում ու
Զղվում է կտորը,
Հյուսվո՛ւմ է,
Հատո՛ւմ է։

Ես ահով լսում եմ իմ սրտի զարկերը,
—Չկա՞ զարկ նրանց մեջ, որ այնպե՞ս, իզո՞ւր է,
Ամե՞ն զարկն է արդյոք հյուսում մեր փառքերը
Եվ տալիս մեր դարին այն, ինչ նա ուզո՛ւմ է,

Մեր դարին, ուր հաշվա՛ծ են բոլոր զարկերը
Եվ ամեն զուր զարկը՝ դավաճան մի սուր է։
1947.

ՍԱՐՅԱԿՆԵՐԸ

Սարյակները եկել, ճախրում են ու ճիրում,
Սակայն չեն գտնում հին բները,
Այնտեղ, ուր աշնանը տնակներ էր խարխուլ՝
Նոր շինվող շենքերի սյուներ են։
Նստած նոր շենքերի տախտակե կմախքին
Նրանք լուռ ու շվար նայում են,
Իրե՞նք են շփոթել իրենց բունը նախկին,
Թե՞ կատակ է անում գարունը։
Սարյակներն աղմուկից հեռո՞ւ են սլանում,
Ուզում են Նորքի ձորը գնալ,
Սարյակնե՛ր, ձեզ բարի ճամփա եմ ցանկանում,
Սակայն զուր մի՞ չվեք, մինք գնա,
Նորքի ժեռ լանջերին նոր ջրանցք են շինում,
Լսո՞ւմ եք՝ դինամիտն է թնդում
Այնտեղ էլ կառուցումն ու աղմուկն է այս նույն
Այնտեղ էլ հանգիստ չեք գտնի դուք։
Եթե դուք խելոք եք, և թե մեր աշխարհում
Առաջին անգամ չեք բուն դնում
Հաշտվեցեք կառուցման համերգի հետ անուշ
Եվ հանգիստ ձու ածեք ձեր բնում։

Ո՞ւր էլ որ դուք չվեք՝ Արաքսից մինչ բևեռ
Չե՞ք գտնի հանդիստ տեղ աշխարհում,
Աղմուկն այս՝ մեր կյանքի ուղեկիցն է հավերժ
Մեր երկրի սրտի զա՛րկն է առույգ։

Նայեցեք ինչպե՞ս է արագիլը այս ծեր
Մոտուի աղմուկի առակ քնել...
Իմ քնքո՞ւշ, իմ բարի, իմ հիմա՞ր սարյակներ,
Լսե՞ք ինձ,
Լսե՞ք ինձ,
Մի՛ չվեք։

ՕՏՏՈ ՇՈՒԼՅԻ ԱԳԱՐԱԿՈՒՄ

(Գինվորի օրագրից)

Ես նայում եմ հիմա ա՛յն ուղղությամբ միայն.
Որտեղից որ մահն է նայում աչքիս,
Ի՞նչ փույթ, թե աշխարհն այս անսահման է ու այն,
Եվ ես աչքեր ունեմ։

Ահա դիրքից,

Ես նայում եմ անթարթ թշնամական դիրքին
Եվ վերև չեմ նայում.

Ինչո՞ւ նայեմ,

Երբ ոչ սավառնա՛կ կա, ոչ էլ պայթյո՛ւն արկի,
Որին զարկե՛լ ուզեմ,

Որից պահվե՛մ։

Շուրջս ապարակն է ինչ որ Օտտո Շուլցի
Եվ իմ դիմաց, որպես գինվորի ոտք,
Մի բարդենու բուն է ցցվել երկար ու ձիգ՝
Կիպ փաթաթված ճերմակ փաթաթանով։
Հրացանը հենած ծառի ճերմակ ոտքին
Եվ թաքնված ինքըս նրա ետև,
Ես նայում եմ անթարթ թշնամական դիրքին
Ու կրակում։

Մինում թեթև՞, թեթև՞,
Օտար պատերազմին, հրդեհին ու մահին՝
Տերևներն են խշշում ձայնով երեր,
Պոկվում է մի տերև, ընկնում հրացանիս,
Բայց ես ինչո՞ւ, ինչո՞ւ նայեմ վերև...

Ես, որ մոռացել եմ, որ գարուն է եղել,
Որ եղել են ծառեր, ծաղիկ ու սեզ,
Որ շրջել եմ մի օր ողջ հասակով,
Սիրել
Եվ խշշոցի ձայնից երգեր հյուսել...

. . . . . .

Հարճատում է դեմիր գնդացիրը հանկարծ,
Գնդակները՝ մահվան մոլուցքից կույր,
Ինձ են փնտրում մթնում կաղկանձանքով անկամ
Ու վիրավորած իրար պատարակում։
Ես ասում եմ.
—«Կույր չէ՛ մարդու բախտը կյանքում,
Եթե նա կույր լիներ — ինչպե՞ս եղավ,
Որ տեսնում էր բոլոր գնդակները անգութ
Եվ ինձ պահում այնպես, որ չմեռա։
Եվ ինչպե՞ս էր նշում ուղին նռնակներիս,
Որ նետեցի նրանց երբ ես դիրքից,
Գնդացիրը՝ մահվան կիսատ խոսքը բերնին
Լռեց ու դուրս եկավ մարտաշարքից։
Արևի՞ց էր,
Թե՞ իմ նետած այդ նռնակից,
Բայց լուսացավ հանկարծ ողջ աշխարհում,
Եվ ես տեսա, ինչպես ծառի ճերմակ ոտքից
Հոսում էր խեժն՝ ինչպես լիրդ-լերդ արյուն։
Այո՛, կույր չէ՛ մարդու բա՛խտը այս աշխարհում՝
Ահա փրկվել եմ ո՞ւմ արյան գնով,
Ծառի ոտքը միասի դողդողում էր, ծալվում
Եվ օրորվում էր նա մահվան քնով...
Ես գրկեցի ծառի ոտքը ճերմա՛կ, ճերմա՛կ,

Համբուրեցի վերքի տեղերն արնոտ.
Եվ ինձ թվաց թե նա՝,
Նա մա՛րդ է ինձ նման,
Սակայն ուրի՞շ բախտով, ուրի՞շ ձայնով։
Նա խշշում էր տխուր, զառանցում էր, ավա՜ղ,
Եվ մոռացած նրա լեզուն վաղուց,
Ես զգացի, որ նա խոսք է ասում մահվան,
Ինչ որ դաղտնիք է մեծ ինձ վստահում։
Եվ ե՞տ եկան հանկարծ իմ օրերը մանուկ,
Երբ դիտեի ամեն ծաղկի լեզուն,
Խաղաց կրծքիս ներքո երգի թրթիռն անուշ,
Որ զգում է կյանքում ամեն հուզում,
Եվ դաղարի մի կարճ, անկրկնելի պահի,
Տեսած հանկարծ երկի՛նք, արև՛, ծառեր,
Երբ ես ականջ դրի կտակին այդ մահի
Սկսեցի որսալ հատ-հատ բառեր։
Շշնջում էր բարդին իմ ականջին կամաց.
Չէ՞ որ խոսում էր նա վերջին շնչում.—
«Կամա՜ց սեղմիր ոտքդ,
Այդպե՞ս,
Լսի՞ր հիմա,
Ես չորս տարի այս պա՛հն էի տենչում...
Դու մի՛ նայիր այդպես տերևներիս դեղնած
Ես ջահե՛լ եմ, քեզնի՞ց անգամ ջահել,
Ես վերջին տաս տարում միայն այսպես եղա՝
Ճաշակելով դավե՞ր, ցավե՞ր, մահե՞ր...
Օտտո Շո՛ւլցն ինձ տնկեց.
Ճանաչո՞ւմ ես նրան,
Թե կենդանի է դեռ՝ դու կսպանե՛ս,
Նա ասում էր.
«Թող քո շուքում տղաս խաղա,

Իսկ երբ նրան ֆյուրերն ի մարտ տանե,
Քեղ կկտրե՛մ, կանեմ ռուսի համար դագաղ,
Քո ճյուղերից՝ ճիպոտ՝ ռուսի համար,
Երբ աշխարհում իշխի ազգը գերմանական
Եվ անապատ դառնա Ռուսիան համայն...»

. . . . . .

... Իսկ ես ծնվել էի ուրի՛շ բանի համար,
Ե՛ս, որ տիրո՛ւմ էի այնպես մարդուն,
Ծաղի՛կ էի ուզում գարնանը տալ նրան,
Ամառանը՝ զով ստվեր՝ իմ սաղարթում,
Աշնանն ուզում էի իմ տխրությա՛մբ անգամ՝
Գեղեցկանալ, նազել ու հմայել,
Մահից հետո հո՛ւրը նետվել հոժարակամ՝
Ջերմացնել մարդուն՝ ինքըս այրվել...
...Օ՜, ես ատո՛ւմ էի Օտտո Շուլցին հավետ,
Բայց փակված այս բակում՝ ինչպես բանտում,
Ես՝ անկարող պոկել իմ արմատն ու քայլել՝
Կնոջ նման՝ կապված ատած մարդուն,
Դեղնո՛ւմ էի վշտից— անզոր մինչև անգամ
Մի ծլած ոերմ թողնել այս պարտեզում,
Այս ամուլ ու դաժան հողում ասֆալտ հագած,
Որ խեղդում էր ելնող ամեն ընձյուղ...
Դողում էի ես խուլ զայրույթից ու լացում՝
Պատմելով իմ վիշտը միայն քամուն,
Որ իմ վշտից խելառ՝ տանիքներն էր ծեծում,
Հողն երեսին՝ տալով տխուր վայում։

...Հաճախ գգվում էր ինձ գարնան զեփյուռն անուշ,
Գրկում մեջքըս բարակ, կուրծքըս կանաչ,
Անցած աշնան դեղին տերևներըս տանում,

Եվ խուլ ձայնով,
Այնպե՛ս, որ չիմանան,
Պատմում էր, որ հեռո՛ւ, հեռո՛ւ Արևելքում՝
Գարնան հետ թև-թևի այստեղ գալիս,
Մի երկիր է տեսել, որտեղ քարը ծաղկում
Եվ տատա՛նկը անգամ՝ վարդ է տալիս։
Նա ասում էր «գարունն այն երկրումն է ծնվում,
Այնտեղի՛ց է արևն այստեղ գալիս,
Պարապ մահը այնտեղ իր մահերդն է նվում,
Եվ ծաղիկ է ծաղկում շիրմաքարից»։

Նա պատմո՛ւմ էր, պատմո՛ւմ, և լսելով նրան
Ես շո՛ւնչ էի առնում, կրկին անգամ.
Եվ Արևելք մեկնած իմ ճյուղերը նվաղ՝
Անխծում իմ բախտը եղերական։
Գարնան մի զով գիշեր, երբ պարտեզում դատարկ,
Ես վիշտս էի պատմում կողքիս բարդուն.
Փողոցից մեզ լսեց մի չորացած տատասկ
Եվ մատնեց ինձ Օտտո Շուլցի որդուն։
Փրփրակալեց խանդից Օտտո Շուլցը գազան
Եվ ճյուղերն այն, որ մենք կարոտանքով,
Մեկնել էինք դեպի Ռուսաստանը ազատ՝
Կտրեց էսէսական իր դանակով,
Եվ հագած նույն ձևի համազգեստներ կանաչ.
Նշված համարներով կանգնած շարքի,
Բանտարկյալնե՛ր դարձան ծառերն այս հեզանազ՝
Բանտի բակում եղած զբոսանքի։
Բայց ինչո՞ւ լոկ ծառերն...
Ամե՛ն ինչ շուրջը մեր,

Մեզ պես խուզվե՛ց, շարվե՛ց ռազմի կարգով,
Խրամատնե՛ր դարձան առուները անմեկ,
Ամեն պարիսպ դարձավ լարափակո՛ց,
Ամեն պատի խորշում մի ինդանոթ դրվեց,
Սերմերի տեղ ակա՛ն ցանվեց հողում,
Վառոդի սև ծուխը ամպի նման փռվեց
Եվ դեպի մեր պաշտած հողն էր սողում...»
... Ծառի ոտքը միակ երերվում էր, դողում,
Եվ թուլացած,
Հենած արմունկին ուսիս,
Նա ընդհատեց խոսքը մի հառաչով խորունկ
Եվ շշնջաց կրկին.—
«Լսի՛ր, լսի՛ր,
Ես հիմա՞ վել անգամ սարսափում եմ հիշել,
Ինչ զգացի ամռան այն առավոտ,
Երբ իմ կողքի բարդին ինձ հառաչով հուշեց,
Թե ձեր հո՛ղն են մտել մերոնք դավով։
Ռուսաստանից մինչև հողն այս գերմանական
Խշշոցով ձայն տված ծառը-ծառին,
Մենք ձեր ամեն վշտից՝ դեղնո՛ւմ էինք կքած,
Ծաղկո՛ւմ՝ ամեն ուրախ լուրի ձայնից։
Մենք դիտեի՛նք,
Ամե՛ն ձեր նահանջի քայլից
Արեգակին մի նոր ա՛մպ է պատում,
Եվ եթե դուք ընկնեք ու արևը մարի՝
Զո՛ւր է կյանքը ծառի՛, ծաղկի՛, մարդո՛ւ,
Զո՛ւր է կյանքը ծովի՛, երկնքի՛ ու հողի՛՝
Ողջ բնության կյանքն այս մոլորակում,
Ահա ինչո՛ւ — անգամ ձմռան ցուրտը մոլի
Դաշնակի՞ց է եղել ձեզ բանակում.

Ահա ինչո՛ւ գերման զինվորների ճամփան,
Մերթ կտրում էր դարնան գետը վարար,
Մերթ անտառը գցում թակարդները իր փակ,
Մերթ ճահիճը քաշում գիրկն իր խավար.
Եվ ահա թե ինչո՛ւ, երբ դուք հաղթած նրանց՝
Փրկեցիք ձեր արյամբ կյանքը մահից,
Ձեզ դաշնակից եղավ ամեն ծառ ինձ նման
Սև իր տիրոջ համար եղավ դահիճ...
Չէ՞ր դիմանա ոչ ոք այնքան վիշտ ու ցավի,
Ինչքան որ մենք տեսանք՝ ծառերս անբառ,
Ձեր սահմանում ջարդված առաջին նուրբ ծառից
Մինչև ե՛ս, որ եղա կյանքիդ պաշտպան։
Ների՞ր, եթե քիչ եմ արել ես քեզ համար,
Քեզ՝ պաշտպանիդ կյանքի ու արևի,
Որ իր արյամբ բերած հաղթանակով անմահ
Փրկեց նաև ցեղը մեր ծառերի։
Ես այսքա՛նը միայն... ների՞ր, քիչ է եթե...
Կարո՞ղ էի լինել ես քեզ դպաղ...
Ինչքան ծա՛նր էր կյանքիս, մահիս՝ այնքան թեթև
Բաղումներում քո ջերմ ու հաղթական...
Ես կուզեի՞...»
Ցնցվե՛ց ծառն ու ուսիս ընկավ,
Ես կամացուկ գետին դրի նրան,
Եվ Սալյուտով պատիվ տված զինվորական,
Կատարելով շասված իրձը նրա,
Կորեցի իմ ձեռքով նրա ճյուղը արնած
Եվ կոթ արի այն վեհ դրոշակին,
Որ ծփո՞ւմ է հիմա կյանքի ծառի նման,
Ամոթապարտ ժայռին սև Ռայխստագի։
1947.

ԿՐԱԿԸ

(Ճակատային ֆոլկլոր, մշակումը ըստ Կեդրինի)

Եղե՞լ է, չի՞ եղել — որտեղի՞ց իմանաս,
Այս դեպքը պատմում են ամեն մի Ճակատում,
Ամեն մեկն ուզում է հերոսը ձևանալ
Եվ ամեն մի զինվոր իր մասին է պատմում...

Ասում են կռվում էր զինվորը Ճակատում,
Իսկ կողքին զինվորի տնակը այրվում էր,
Դադարին զինվորը ծխախոտ փաթաթում
Ու այրվող տնակի բոցերից վառում է։
Վառում է ու ծխում... Եվ թվում է, մթնում,
Զինվորի հոգին է մխում ու գալարվում.
Դառը ծուխը նրան մորմոքի պես խեղդում,
Կրակը՝ վրեժի նման սի՛ռն է այրում։
Լեյտենանտն այդ պահին անցնում էր դյուղակից,
Մոտենում է նրան, ծխախոտը վառում,
Եվ վրեժը նրա խառնած իր կրակին,
Լուրերի հետ ռազմի՝ հրամպունկտ է տանում։

—Ասում ես լա՞վ է, հա՞,—գնդապետն ասում է,—
Քշե՞լ ենք դյուղակից,
Մի դե՞ս տուր կրակդ,
Եվ ծխի հետ ծծած զինվորի ցասումը՝
Հրաման է տալիս մտնել Մ. քաղաքը։
Տալիս է և հանկարծ զրնգում է զանգը՝

Բանակի շտաբում սպասում են նրան.
— Գնդապե՛տ, նայո՞ւմ է ձեզ ամբողջ բանակը,
Պատրաստ է ամեն ինչ
— Պատրաստ է, գեներա՛լ

Ժպտո՞ւմ է գեներալն ու տուփը հանում է
— Վառվո՞ւմ է, գնդապետ,
— Վառվո՛ւմ է, գեներա՛լ,
Գեներալը ծուխը խոր ներս է տանում ու
Քարտեզին է նայում խոհուն ու սևեռած...
«Թե վազը մերոնք ետ առնեն Ն քաղաքը,
Մեր զորքը կհասնի հայրենի սահմանին...»
—«Համաձա՞յն եք մա՛րշալ»
— Ներեցե՛ք,
Կրա՞կը...
— Մարշալը կարող է զեկուցել Մոսկվային»։

Եվ այսպես, կավոռամ էր զինվորը ճակատում,
Կավո՛ւմ... ու չգիտեր, (որտեղի՞ց իմանար)
Որ Մարշալն այդ պահին Մոսկվա էր շտապում
Զինվորի կրակով գլանակը վառած։
Ծխում էր Մարշալն ու զեկուցում Կրեմլին,
Եվ ասում են, երբ որ Մարշալը զադարեց,
Ստալինը հանդիստ բարձրացավ իր տեղից
Եվ նրա կրակից ծխամորճը վառեց...

Վառե՛ց ու հաղթության հրամանը գրած՝
Ժողովուրդը կոչեց շինարար սխրանքի։
... Եվ փրկե Մոլոտովն Ասամբլեա թռավ՝
Գլանակը վառած ճիշտ այդ նույն կրակից։

. . . . . .

Եղե՞լ է, չի՞ եղել — որտեղի՞ց իմանաս,
Բայց՝ պատմում են ամեն դործարան ու արտում.
Կարո՞ղ էր բանաստեղծն անտարբեր ձևանալ
Ու չերդել ա՛յն, ինչ ողջ ժողովուրդն է պատմում։

1948.

ԶՐՈՒՅՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳԵՐՈՒ ՀԵՏ

Նստել էր մայրը, թել էր մանում,
Եվ թելն իր հույսի պես բարակ էր,
Թելի պես այն հույսն էր երկարում,
Թե դեռ կա՛ իր կորած զավակը։
Իր զավա՛կն — այսինքն եղբայրը
Որ կորած է անհետ, կամ մեռած,
Եվ որի ջութակի որբ լարը
Կալի՞ս է տիրոջը իր կորած։
Ես ստո՛ւմ եմ լացը կյանքում իմ՝
Թեև նա մտերիմն է մորը,
Չե՛մ ուզում, որ սրտիս ցասումը
Արցունքից վատիկի ոնց խմորը,
Բայց գալիս, պատմում են մայրերը
Ամեն մեկն իր մորմոքը անել,
—«Իմ որդուն կենդանի թաղե՞լ են,—»
—«Իմ որդու զույգ աչքե՛րն են հանել...»
Ո՞ր դ	ը կարող էր այդ անել...
Ես ինչպե՞ս պատկերեմ մորումը,
Նրա՛նց, ում ճակատում սպանել
Եվ ատե՞լ եմ այնքան երգում իմ,
Ի՞նչ մարդ են, ի՞նչ գույնի ու ձևի,
Խորհո՛ւմ եմ,

Կիտում եմ հոնքե՛րը,
Ժանիքնե՞ր կոմենեան երևի
Եվ ճանկեր, որ արնոտ ու կեռ են,..

Ֆանտազիաս իրենից սարսում է,
Ինձ փողո՞ց է նետում իմ վիշտը,
Իսկ այնտեղ երկինքը լացում է՝
Կարծես թե երկինքն էլ մոր սիրտ է։
Շրջում եմ, խոհերն ինձ տանջում են,
Եվ հանկարծ, փողոցում մի բանուկ,
Թվում է, թե մեկն ինձ կանչում է,
Շշնջում ու ձեռքով է անում։
Մանո՞թ է կարծես թե հայացքը,
Գլխա՛րկը, հագո՛ւստը, աչքե՛րը,
Բայց ե՞րբ է եկել նա քաղա՛քն այս,
Ինչո՞ւ է իր ձեռքը մեկնել ինձ։
Նայում եմ,
Մենակ չէ,
Շատե՛րն են,
Մի քանդված շենքի հիմք են փորում,
Նա բերնի՞ն է տանում մատները
Եվ ինձնից ծխախոտ է մուրում։
Ես գետին եմ դնում հենակը
Եվ ա՛յն է՝ իմ տուփը մեկնել եմ,
Երբ սուլում է հանկարծ պահակը.—
—«Արգելվա՛ծ է այստեղ կանգնելը»...

. . . . . .

—«Գերի է» — շշնջում է մայրիս,
«Գուցե սա՛ է մորթել որդուն իմ»,
Եվ լացն իր, որ որդու համա՛ր է
Կիսում ու
Իր դահճին գթո՛ւմ է։
Սպասի՛ր,
Գրո՛ղը քեզ տանի,

Մի՞թե սա՛ է հղկել այն դ

՛ը,
Որ թաղել է մարդկանց կենդանի,
Եվ մերոնց աչքերը հանել է։
Ոչ հանկե՛ր,
Ոչ ժանի՛ք,
ոչ երա՛խ...
Հանդիպե՛ր մեկն այսպես քաղաքում,
Դուցե հյո՛ւր կանչեի ես նրան,
Կարդալի սիրերգնե՛րն իմ քնքուշ։
Կարծես... ինձ նման մարդ է կյանքում...
Սպասի՛ր,
ե՛տ տար քո ձեռքերը,
Մի՞թե դո՛ւ, դու է՛լ ես սերն զգում,
Հասկանում մուզիկն ու երգերը։
Տես ի՞նչ էլ բարա՛կ են մատները...
Նվագո՞ւմ ես,
Եվ ի՞նչ
Դաշնամո՞ւր,
Իսկ ինչո՞ւ մեր ջութակն անտեր է
Եվ կորած եղբայրն իմ աշխարհում։
Ինժինե՞ր է հայրդ մեծանուն,
Իսկ գիտե՞ս ի՛նչ հող ես փորո՛ւմ դու,
Այստեղ մեր թատրո՞նն էր բարձրանում,
Որ քանդե՛ց քո նետած սև ռումբը։
Դու անգամ Գյոթե՞ ես հասկանում,
Դու տեսել ես անգամ Վեյմա՞րը,
Բայց ո՞վ է, ասա՛ ինձ, Վեյմարում,
Կառուցել մահվան սև ճամբարն այն,
Ուր գինին գանգի մեջ լցնելով
Մեֆիստոն խրախճանք էր անում,

Եվ վհուկ Գրետխենն անխռով
Քույրերիս վարսից թե՞լ էր մանում...
Չե՞ս լսել,
Օ՜, դու չե՞ս իմանում,
Իսկ ես այդ շա՜տ վաղուց գիտեի,
Այն օրից, երբ Գյոթեն մեծանում
Խոնարհեց իր գլուխն արքային,
Այդ ձեր մի՛տքն էր, որ սև այն դարում
Սրի տակ դրեց իր հանճարը,
Որ երկնի խոհերի տեղ արյուն
Եվ խեղդի՛ նրա մեջ աշխարհը։
Զարը քեզ թվում էր սրբությո՞ւն...
Իսկ գիտե՞ս, ինչո՞ւ ես ապրում դու
Որ այս կի՛նը, որի սեգ որդուն,
Դիպել է գուցե հենց քո ռոմբը,
Խղճո՞ւմ ֆ քեզ սրտով իր անքեն՝
Տեսնելով քո վիշտն ու տանջվելը...
(Թեև սա կատա՞կ է նրա դեմ,
Ինչ մերոնք քո երկրում քաշել են...)
Տեսնո՞ւմ ես հողն ինչպես ծաղկե՞լ է,
Ինչ պայծառ ու մեղմ է գարունը,
Կյանքն ամե՛ն տեղ այսպես շքե՞ղ էր
Եվ լա՞յն էր աշխարհն ու անհուն էր։
Ո՞ւմ էր պետք աշխարհում արյունը,
Ո՞ւմ ֆ էր պետք ոճիրն ու խավարը,
Ո՞վ ական ցանեց մեր հողում այս,
Որ ծաղկի ու մրգի համար էր,
Ո՞ւմ ձեռքով սպանվեց եղբայրն իմ,
Որ այնքան երակոտ ապրում էր,
Եվ որի ջուվակը ոնց մայրրս

Հիմա դառն արցունքն է թափում իր։
Իսկ հիմա աղերսում, խնդրում ես,
Ա՛ռ, ծխի՛ր,
Չէ՞ որ մենք միշտ մա՛րդ ենք,
Դրանո՞վ է որ մենք հաղթում ենք,
Դրանո՞վ է անմահ միշտ կյանքը։
Առ ծխի՛ր,
Ցավո՞ւմ է դեռ վերքն այն,
Որ քո այս մուրոզ ձեռքն է տվել,
Եվ թեև ի՛մն է արդ օրենքը՝
Բայց դահիճ չե՛մ կարող ես լինել։
Ես սի՛րտս կտայի քեզ նվեր,
Թե պատվո՛վ դայիր դու մեր տունը...
Ա՛ռ,
Եվ հողն այս փորիր որ թաղես,
Քո երկրի
Եվ քո սև անկումը։

1946.

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՄՈՐ ՄԱՅՐԻՆ

Հայրենիքը մա՛յր է որդիների համար,
Իսկ մոր համար՝ որդի, միա՛կ որդի,
Սիրահարի համար՝ նրա սե՛րն է անմահ
Եվ բոլորի համար՝ թանկ է օդից։

... Գերմանացին՝ ձեռքը ավտոմատի կոթին
Զարշարում էր երկար մորը պառավ,
— Ասա՛, որտե՞ղ է նա, քո պարտիզան որդին,
Քո թոռնիկին խղճա՝ կրծքիդ փարված։

Բայց ո՛չ մի բառ չելավ մոր շուրթերից սառած,
Թեև սմքած կրծքում՝ հուր էր, հրդեհ,
Նա «հայրենիք» բառը չդիտե՞ր էլ առաջ,
Սակայն զգաց հանկարծ՝ գնդակի դեմ,

Որ թաքնված է նա, որդու թաքստոցում,
Դուցե և ի՛նքն է հենց՝ իր քաջ որդին
Եվ թե որդու տեղը մատնի գերմանացուն՝
Իր որդու հետ նա՛ էլ պիտի մորթվի.

Իսկ իր որդին նրան կյանքում «մա՛յր» էր կոչում,
Իր նման նա թա՛նկ էր որդու համար...

Ի՞նչ կարող էր անել ավտոմատը անշոնչ,
Երբ դնդակ չի՞ ձուլված անմահների համար...

... Իսկ երբ այցի եկավ որդին իր մոր շիրմին.—
—«Շնորհակա՛լ եմ, անդի՞ն» — ասաց կամաց,

Եվ չգիտե ո՞չ ոք, ո՞չ ոք մինչև հիմի
Հայրենիքի՞ն ասաց, թե՞ մորն անմահ։

1948. VII Դրիմ.

ԵՐԵՔ ԶՐՈՒՅՑ ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ՀԵՏ

1). Սանդոպլիը

Դուք հարցնում եք— ինչո՞ւ հալածեցինք
Եվ ինչո՞ւ իմ երկրին հավատո՞ւմ եմ...
Ես խոսքեր չե՛մ ասի գեղեցիկ։
— Տեսնո՞ւմ եք ավերակ այս տունը։
Սա իմ տո՛ունն եր, պարո՛ն, օջա՛խն իմ,
Ե՛ս էի շինել՝ իմ ձեռքո՛վ այս,
Սակայն ո՛չ, պարո՛ն, սա իմ ձա՛խն է,
Աջ ձեռքս՝ գնաց տան հետքո՛վ իմ։
Ընտանի՞ք, այո՛, ես ունեի՛,
Նրան արկն այս տան տակ թաղե՛լ է.
Եվ նրա արյա՛մբ են երևի
Կարմրել աղյուսե քարերն այս։
Դուք հարցնում եք, թե ե՞րբ եղավ այդ,—
— Կովի հենց առաջին գիշերը...
Բայց դուք ինձ գթո՞ւմ եք,
Օ՜, բա՛վ է,
Այս հուշը՝ շտկում է ուսե՛րն իմ։
Դառն հուշը վերք փորող մի մա՛տ է...
Հենց այստե՛ղ, իմ դիմաց այն դո՛ւռն էր,
Որ բացո՛ւմ էր իմ դեմ, իմ բախտը
Եվ փակում փորձանքի դեմ տունը։
Իսկ այնտեղ վառարա՛նն էր դրված,
Ուր հուրն ինձ սիրույս պես ժպտում էր.

Եվ որից լոկ մոխի՞րն այս մնաց,
Իմ տան մե՛ջ,
Իմ կյանքո՛ւմ,
Սրտո՛ւմ իմ։
Դուք ասում եք ողջն այս մոռանա՞մ,
Ասում եք եղածը—եղե՞լ է,
Մոռանամ, որ կրկի՞ն նա դառնա...
Ո՛չ,
Հիշե՛լն է կանխում եղեռնը։
... Այդ կուվի առաջին գիշերն էր.
Եվ գիտե՞ք, պարո՛ն, հենց այստե՛ղ էր,
Երբ հանկարծ զգացի ես անշեղ,
Որ ինչ էլ լինի՝ մենք հաղթե՛լ ենք։
Զարմացե՞լ եք, պարո՛ն, շվարե՞լ,
Տեսնո՞ւմ եք ավերակ այս տունը՝
Արկերը ոչինչ չե՛ն խնայել—
Բայց սանդո՛ւղքը,
Նայե՛ք,
Մնո՛ւմ վ։
Մնացե՛լ էր, որ ես իմանամ,
Որ թեկուզ արկերն ինձ թաղե՛ն.էլ,
Կրկին ես պիտի վե՞ր բարձրանամ՝
Ավելի՛,
Քան առաջ եղե՛լ եմ
Բայց դուք ի՞նչ... քրթմնջո՞ւմ եք արդեն,
Թե արկի վրիպո՞ւմ է սա պարզ...
— Արկն, այո՛, կարո՞ղ էր վրիպել,
Պատմությունն՝ անվրե՛պ է սակայն։
1947.

2) Հոգնություն

Դուք հարցնո՞ւմ եք ինձ «ինչպե՞ս չեք հոգնում»,
Հոգնեցնո՞ւմ է ինձ այդ հարցը նախիվ
Դուք կարծում եք ես հրա՞շք եմ երկնում,
Ո՛չ— անծանոթ եք դուք մեր աշխարհին։

Ես ինչպե՞ս հոգնեմ, երբ սերունդների
Սրազանքն է վեհ իմ ուսին ընկել,
Եվ պատմությունը վստահել է ինձ
Նոր Հոկտեմբերով աշխարհը փրկել։

Ինչպե՞ս հոգնեմ, երբ ամեն հոգնությունն
Իմ հոգում մի նոր տենչա՛նք է ծնում,
Եվ այնքան քի՞չ է կարճ կյանքը մարդու,
Որ երազներս կիսատ են մնում։

Ես ինչպե՞ս հոգնեմ, երբ ծարավ աչքով
Կոմունիզմի լույս ափն եմ նշմարում,
Եվ թե չհասնե՞մ նրան իմ կյանքով
Գեթ գործո՛վ պիտի հասնեմ աշխարհում։

Ինչպե՞ս ես հոգնեմ, երբ հորիզոնում
Շողո՞ւմ է տենչիս արևը շռայլ,
Երբ պատմությունը նույն տե՛ղն է գնում
Եվ տանում է ինձ թևերի վրա։

Իսկ դուք հոգնե՞լ եք...
Հասկանո՞ւմ եմ ձեզ,
Դուք քայլում եք ձեր ստվերի հետքով,
Եվ ո՛չ կարող եք էլ առաջ վազել,
Ո՛չ էլ ստվերը ետ քաշել ձեռքով։

3). Տարիների «բեռը»

Այն ո՞վ է ասում «տարիների բեռ»
Ինչո՞ւ է ասում — գրո՛ղը տանի,
Ո՞ւմ է ուզում այս պարոնը խաբել
Մեռա՞ծ է եղել նա, թե՞ կենդանի։

Ինչո՞ւ սպասել անտենչ ու անկիրք,
Որ տարիները քո ոտին դրվեն,
Երբ ամեն տարին՝ քար է սանդուղքի
Ուր ոտքդ դրած բարձրանում ես վեր։

Երբ ամեն տարվա տենչը նվաճած
Մի նոր տենչանք է ծնում ոսկեթև,
Եվ բարձրանում ես այդ սանդուղքն ինչքան՝
Այնքան հպա՛րտ ես զգում ու թեթև։

Ո՞վ ասաց տարին՝ «բեռ» է այս կյանքում,
Թե՛ռ լինի անգամ՝ թե տենչանքը կա,
Այդ բեռից այնքան ուսերը շտկվում,
Խրո՛խտ է դառնում քայլվածքը այնքան։

Կյա՛նք, եթե անգամ բե՞ռ են տարիներն՝
Ինչքան կարող ես շա՞տ դիր իմ ուսին,
Անծանո՛թ է ինձ հոգնությունը մեղկ,
Եվ ես այն ներքև դնել չե՞մ ուզի.

Ես կտանե՛մ այն տենչանքիս ճամփով,
Թեկուզ այդ լինի անվա՛րձ ու ձրի՛...
... Իր ուսի՛ն զգալ կյանքի «բեռն» ամբողջ,
Մի՞թե դրանից զատ կյանք կա ուրիշ։

ԵՍ ՁԵ՛Զ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԻԿ...

Երեկ, Ղրիմում, մի փոքրիկ մանուկ,
Սևաչ մի մանուկ՝ երեք տարեկան,
Խաղաղ ծովափին երբ խա՜ղ եր անում՝
Մի հին, չպայթած ականից ընկավ։

Ես ձե՛զ եմ դիմում, աշխարհի մարդիկ,
Ուղղ-Սարիտում ինձ չե՞ն հասկանա,
Այս ականը դեռ հետքն է հին մարտի
Մեր հաղթող երկրի դաշտերում կանաչ,

Եվ մինչ հազի՞վ ենք մենք մեր աշխարհից
Հին կռվի արնոտ հետքերը մաքրել,
Այնտեղ ճեղքո՞ւմ են ատոմը մահի,
Որ վաղը հողե այս գո՞նդը ճեղքեն։

Դուք լսո՞ւմ եք ինձ, աշխարհի մարդիկ,
Պետք չէ այս շիրմին ո՛չ սուգ, ո՛չ կական,
Բայց հսկեք ձեր շուրջն աչքերով անթիվ,
Որ այս նույն պահին չձուլեն ական,

Հիշեցե՛ք շիրիմն այս փոքրիկ մանկան
Եվ պատերազմը խեղդեցե՛ք բնում,
Ոչորե՞ք նրա բազուկներն ազահ
Ինչպես իմ հզոր երկի՞րն է անում։

Կռվե՛ք կռվի դեմ. և մի՛ք վարանի
Նրա արգանդին նետելու ական,
Որ այս մանկան պես չընկնի ականից
Խաղաղությունը՝ երեք տարեկան։

1948. Ղրիմ.

ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Մոգասատան» նավն է. տուն բերում հային
եվ «Հաղթանակն» է. նրան ուղեկցում

ԶՆՈՒՔԸ

Բարեկա՛մ, մեկնիր ինձ քո ձեռքը,
Սա իմ ձե՛ռքն է—
Իսկ ես՝ Հայաստա՛նը,
Կյանքում միշտ ատել է նա զենքը
Եվ բռնել բրիչն ու մատյանը։
Այս ձե՛ռքն էր, որ հողում խալդյա՛ն այս
Առաջին տաշած քարը դրեց,
Եվ ճեղքած լիպենդի պատյանը
Սեպագիր իմ ծնունդը գրեց։
Կնճռոտել են նրան ցավերը
Հողի պես՝ ակոսված արորից,
Եվ թեև նա միշտ էլ արնել է՝
Քրտինքով մաքրվե՞լ է նորից։
Կտրվե՞լ են նրա մատները,
Ցիրուցան եղել ողջ աշխարհում
Մի մատը մյուսին մատնել է
Բայց կրկին, սրբած վերք ու արյուն,
Նա հասավ նոր կյանքի եզե՛րքն այս
Եվ կնկներ բաց երախը մահի
Թե ամուր չբռներ այն ձեռքը,

Որ մեկնեց նրան Ռուսիան կարմիր։
... Աղբյուրնե՞ր հանեց նա ժեռ քարից,
Եղունգով քերեց հին արյունը,
Կառուցեց իմ նոր ու վեհ Անին,
Շուռ տվեց գետերի հին հունը,
Եվ թեև կտրված մատները՝
Բայց սեղմեց կոկորդը թշնամու,
Որ մեկնե՞լ էր արնոտ թաթերն իր
Ջնջելու իմ սերմը աշխարհում։
... Դուք տեսե՞լ եք երազ աշխարհում,
Դուք գիտե՞ք, թե ո՞րն է մորմոքը,
Չար երազը շո՞ւտ է կատարվում,
Բարին է միայն, որ ցնորք է։
Բայց երա՞զը արնոտ իմ ձեռքի՝
Կարո՞ղ էր նա մնալ անկատար,
Երբ տեսնում էր այն ողջ մի երկիր
Եվ ո՞չ թե մի գիշեր—
— Դարեդա՞ր։
(Կարո՞ղ էր նա մնալ անկատար,
Երբ ամեն վառ երազ աշխարհում,
Կրեմլում է ծնվում հաղթական
Եվ նրա աստղի տակ կատարվում...)

Կատարվե՞ց իմ երազն անարգված,
Երազն իմ՝ արիմնի ու քնած
Հինգ մատներրս ահա հավաքված,
Եղբոր պես սեղմրվել են իրար։
Հուզմունքով նայում եմ ես նրանց,
Սա իմ ձե՛ռքն է
— իսկ ես՝ Հայաստա՛նն եմ,

Ես ուզեմ՝ մատներրս կբանամ՝,
Կբռնեմ բրիչն ու մատյանը։
Եվ ուզեմ՝ իմ այս հինգ մատներով
Կսեղմեմ երկաթե բռունցքրս—
Թե փորձեն խլել կյա՛նքն այս նորոգ
Կամ դավի սո՛ւր խրել իմ կուրծքը։

1947.

ԲԱԼԼԱԴ ՁԿՆՈՐՍԻ ՄԱՍԻՆ

Երազի՞ մեջ անգամ չե՛մ տեսել ես Կապրին,
Ասում են նա այնպես չքնա՞ղ է,
Բայց ձկնորս Վեսնին ոչ ծո՛վը կխաբի
Եվ ո՛չ էլ աստղերի բիլ խաղը։
Կարո՞ղ է հմայել աստղերի օրորը
Գրաստին, որ քեռից տնքում է,...
Մայր տեսներ ձկնորսը՝ հիշում էր իր մորը,
Իսկ Պալաց թե տեսներ՝— իր տունը։
Վանա ծովն էր հիշում, երբ ծովը ծփում էր,
Իսկ երբ որ մայրամուտն արնում էր,
Թվում էր, իր եղբոր արյո՛ւնն է թափվում ու
Հայրենի իր գյուղը այրվում է։
Ի՞նչ փույթ, թե գեղեցիկ են ծաղկունքն ու քարը,
Երբ նրա ոսին բեռն էր դաղթի,
Նետում էր ծովի մեջ ձկնորսն իր ուռկանը
Եվ չկա՞ր ոսկե ձուկը բախտի։
Եվ տրտում երգում էր ձկնորսը ծովափին
Երգի մեջ արցունքն էր թափում իր,
Ձկան պես սա՞ռն էին աշխարհը և մարդիկ
Եվ նույն սև գոռշն էր ափի մեջ։

***

Երգում էր մի գիշեր ձկնորսը տարագիր,
Ջէ՞ր երգում՝ ցավի տակ տնքում էր,

Երբ նրան մոտեցավ սինյորը մի ուսուցչի,
Որ Հոգնած,
Գունատ
Ու անքուն էր։
Կարճ հասակ ուներ նա,
Վիթխարի մի ճակատ,
Որից սև գլխարկը նեղվում էր,
Կկոցված աչքերի ժպիտը մանկական
Մեխո՛ւմ ներ նայողին տեղո՛ւմ իր։
Նա այնպես զգույշ էր քայլում,
Որ թվում էր,
Վախենում է երգը տրորի...
... Իսկ երգը կռունկի թևերով թռում էր
Կորցրած եզերքը մայր հողի։
Երգում էր ձկնորսն ու հայհոյում էր մթնում.—
«Այսպե՛ս է աշխարհի օրենքը,
Երբ պարապ սինյորը ուրիշ գործ չի՝ գտնում
Գալիս է՝ խանգարի քո երգը։
Չե՞ն թողնում, որ երգես գոնե վիշտդ ծածուկ՝
Քո բախտն ու հաճույքը քամո՛ւմ են,
Իսկ հետո հաճո՛ւյք են որոնում քո լացում
Եվ գոռոզ նետելով ծաղրում են...»
Լռում է ձկնորսն ու մրմնջում մտքում իր
«Թողե՛լ եմ ու եկել մուլքերքս»...
Բայց լուռ է սինյորը,
Հայացքը ժպտում է՝
Թեև թաց են կապույտ աչքերը...
— Երգո՞ւմ ես...
— Երգո՛ւմ եմ։
— Ի՞նչ ազգ ես...

— Ե՞ս, հա՛յ եմ։
— Գաղթե՞լ ես...
— Է, քե՞զ ինչ, գաղթե՞լ եմ։
Բայց այնպե՛ս է խոսում՝ կարծես քո եղբայրն է
Եվ քո բախտը՝ նրա բախտն է՛լ է։
— Շա՞տ մեռան...
— Թիվ չկա՞։
— Ջերոնցի՞ց...
— Սղբա՛յրըս...
— Իսկ որտե՞ղ գաղթեցին հայերը
— Է՛, ես ի՞նչ իմանամ,
Անծա՛յր է աշխարհը.
Եվ մոլոր՝ պանդուխտի քայլերը...»
Աչքերը լցված են, բայց ուրախ փայլում են,
Աջ ձեռքը՝ ձկնորսի ուսին է.
— Գիտե՞ք ինչ,
Ընկե՛ր հայ,
Ի՞նչ էր ձեր անո՞ւնը.
Հը՞մ... Լևոն,
Իսկ իմը՝ Լենի՛ն է,
Եկ լինենք բարեկա՛մ,
Բայց վշտից մի՛ լքվի
Ա՜յ, «կռունկը»,
Շա՞տ էր տրտո՛ւմ նա...
Մենք քեզ հետ կփոխե՛նք այս աշխարհը հիմքից
Եվ ես հյո՛ւր կգամ նոր քո տունը։
Երբ վերջին սինյորի հետ չքվեն կյանքո՛ւմ այս
Պատերա՛զմը,
Գա՛ղթն
Ու ավա՛րը

Բոլորի հետ դո՛ւ էլ կդառնաս քո տունը
Քո Կապրի՛ն,
Քո Վա՛նն
Ու Սևա՛նը...»
Ասաց ու հեռացավ...
Ո՛չ մի կեղծ դուք ու ցավ,
Բայց այնքան հուսալի՛ց էր ձայնը,
Որ թվաց, թե նրա խոսքերից լոմսացան
Ողջ Կապրին,
Իտա՛լիան,
Աշխարհը։

***

... Պանդուխտի սրտի պես հուզվա՛ծ է Սևանը,
Պանդուխտի, որ դարձել է տո՛ւն իր,
Ծերունի ձկնորսը հայրենի իր տա՛նն է՝
Տան պատից Լենինը ժպտո՛ւմ է։
Չգիտեմ, հիշո՞ւմ է ծեր ձկնորսը Կապրին.
Եվ Բալլա՞դ է սա,
Թե՞ եղե՞լ է
Բայց ո՞վ իր անվան հետ բալլադն այս չի՞ կապի՝
Փոխելով խոսքերն ու տեղերը։
Ո՞ւմ բախտը չի խաչվել Լենինի մեծ բախտին,
Որն աշխարհը հիմքից փոխել է.
— Չե՞ք հիշում,
Հարցրեք սեփական ձեր բախտից
Եվ ձեր բախտը կասի
— Եղե՛լ է։

1947. IV

ԱՐԱՋԻ ԱՓԻՆ

1) Ծառը

Երկու աղբյուր են Արազը թափվում,
Մեկն աղի արցունք, մյուսը՝ ծիծաղ,
Երկու ծառեր կան աջ ու ձախ ափում՝
Մեկը չոր, մեկին՝ ծաղիկ ու ծիծառ։

Իսկ հողը նո՛ւյնն է երկու ափերին,
Նույն զովն է գարնան, նույն գարնան արփին։

...Ծառը պարզած իր ճյուղերն անբերրի,
Մեղ օգնության է կանչում այն ափից։

2) Պանդուխտի տնակը Դարսում

Երբ տունն այրեցին, տան հետ միասին
Այրվեց և բունը մայր արագիլի,
Մարդ ու արագիլ փախան միասին
Զաղերին փրկած մահվան մագիլից։

Գարնանն ետ եկավ արագիլն անտուն.
Եվ մինչև այսօր կանգնած մի ոտքին,
Սպասում է իր տիրոջը պանդուխտ,
Որ բույնը շինի նրա տանիքին։
1947.

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԱՎԵՐԸ ԲՈՍՖՈՐՈՒՄ

Տարիներ առաջ, այս նույն ափերից,
Պանդուխտ հայերի նավերն հեռացան.
Սև էր նրանց ծուխն՝ աշնան ամպերից
Եվ հեծկլտոց էր սուլոցն ողբաձայն։
Գնացին նրանք ու ետ չդարձան,
Եվ փա՜կ կմնար ուղին Բոսֆորի,
Թե հրաշքի պես շիրմից քարձրացած՝
Չկանչե՞ր նրանց մեր հողը նորից։
(Եթե աշխարհի ամեն մի մասում
Ամեն հայ պանդուխտ հիմա չերաղեր,
Նավերն այս, որոնց սուլոցը՝ ողջույն,
Ծուխը՝ հայրենի տան ծո՜ւխ է կարծես...)
... Անցնում են նրանք հիմա Բոսֆորից
Եվ մեջիդները դողո՜ւմ են ահով,
Կրկին վե՜ր եկած շիրիմի հողից
Անցնում են Զարդի վկաներն հայոց,
Որ դեպի Մոսկվան՝ հողն արդարության
Բոսֆորի արնոտ հաշիվը բերեն՝
Թրջած արցունքով սև պանդխտության,
Որ օտա՜ր ափում թափեցին երեկ...
Անցնո՜ւմ են հայոց զոհերը փրկված...
Օ՜, ի՜նչ հաճույքով եղեռնապատում,

Բոսֆորը արնոտ երախը փակած
Կխեղդե՛ր նրանց իր սև կոկորդում...
Ավա՜ղ, ա՜յլ է դարն ու միտքը դարի—
Եվ ա՜յլ ջրեր են իր ափը ծեծում,
«Ռուսաստան» նա՛լն է տուն բերում հային
Եվ «Հաղթանա՛կ»-ն է նրան ուղեկցում.
Նրանք, որ ահեղ հողմերին հաղթած
Պատմության ծովում նոր ե՛լք են բացել...
... Նայում է նրանց Բոսֆորը անթարթ,
Եվ... երախն ահից բա՜ց է մնացել։

1947.

ԿՈՒՅՐԸ

Նավը հասնում էր ափին հայրենի,
Խռնվել էին բոլորը նավում,
Լոկ ցուպին կոթնած մի կույր ծերունի,
Ափի փոխարեն ծովին էր նայում։
Եվ ասին նրան պանդուխտներն անվիշտ՝
Կույր այդ ծերունուն՝ դեգերող նավում.
— Բոլորն ափին են նայում ծարավի
Իսկ դո՛ւ, խե՜ղճ դու կույր, ո՞ւր ես դու նայում։
Եվ ո՞ւր ես՝ ցուպը աչք արած ձեռքիդ
Ճանապարհ ընկել հայրենի հեռուն,
Չէ՞ որ նո՛ւյնն է միշտ երևում աչքիդ՝
Ուր էլ որ գնաս՝ բան չի՜ երևում»։
Եվ կույրը ասաց
— «Ես տեսե՛լ եմ այն,
Երբ դեռ չէ՞ր դիպել յաթաղանն աչքիս,
Կոպերիս տակ կա պատկերը նրա
Եվ գիտեմ նրան ես գոց ու անգիր։
Ես գիտեմ որտե՞ղ— ինչ քար է ընկած,
Որտե՞ղ ծառ կա և պիտի կռանամ,
Հալվերժ ձյան բույրից Մասի՛սը կզգամ
Ու զով զեփյուռից՝ լիճը Սևանա։
Եվ ասին նրան հայրենի հողում
—«Կո՛ւյր ես դու՝ սակայն իրա՜վ ես ասում,
Բայց թե մնում է Մասիսն իր տեղում,

Եվ կա Սևանա լիճը զովասուն,
Սակայն փոխվե՞լ է ամեն ինչ վաղուց
Մոխիրից ծնված նոր Հայաստանում,
Դու չե՞ս գտնի քո երկիրն աշխարհում՝
Թե հին պատկերն ես կոպիդ տակ տանում...»
Եվ կույրը ասաց.
— Կոպիս տակ փակված,
Ավա՜ղ, չկա նոր պատկերն աշխարհիս,
Բայց նորի բույրի՞ց ես նրան կզգամ.
Եվ հավերժ հնչող մուրճերի ձայնից
Իմ թեթևացած քայլվածքի՞ց կզգամ՝
Թե դիպչի անգամ հին ցուպդ քարի,
Աչաղո՞ւրկ եմ ես... բայց կո՛ւյր եմ այնքան,
Որ չիմանայի թե ո՛ւր եմ գալիս։

1947. Բաթումի

ԵՐԳԵՐ ԳՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

1. Պանդուխտի վերադարձը

Ոչ մեր տանջա՛նքը նա բերեց նրան,
Ոչ էլ գթությո՛ւնն օտար ազգերի,
Հայաստանն իր պես թե մենակ մնար,
Նա ետ չէ՞ր դառնա օտար ափերից։

Հայերից առաջ աշխարհում ծնված՝
Կթողե՞ր նրան «հարցը Հայկական»,
Թե արյամբ թրջված հանդուցյալը նրա
Չկտրեր սուրը մեր Սովետական։

2. Առաջին մայրերը

Յոթ օր նավել էր ծովերի վրա
Հայոց պանդուխտը իր տուն դառնալիս,
Եվ երբ ոտք դրեց մեր հողի վրա
Երերվում էր նա՝ երբ ման էր գալիս։

Այդպես մանո՛ւկն է երերվում միայն,
Երբ իր առաջին քայլերն է անում...
Իսկ նա... մի՛ նայիր մարդերին ճերմակ
Նորի՞ց է ծնվել նա Հայաստանում։

3. Հայրենածաղիկը

Ասում են, մի հայ աղջիկ գաղթելիս,
Հայաստանից մի ծաղիկ է տարել,
Քրել այն ցողով իր արցունքների
Ու վերատարձի հույսով փայփայել.
Ամեն մի ծաղիկ, մայրի հողում ծլած
Զգտել է դեպի երկինք ու արև,
Իսկ նա՝ ուր լիներ՝ գլուխը ծռած
Դեպի հայրենի իր հողն է նայել,
Եվ ուղղել է իր գլուխը տրտում
Միայն հայրենի եղերքում հայոց...

... Այդ ծաղիկը կա ամենքի սրտում
Եվ բուրում է նա՝ Հայրենի կարոտ։

4. Ուխտավորը

Ծերունի, պանդուխտ մի հավատացյալ
Ոտք դրեց հողին նոր Հայաստանի,
Նա սիրում էր լոկ մեր փառքերն անցյալ
Եվ մեր վանքերը, մեր ամեն բանից.
Մենք գիտեինք թե նա ո՞ւր է գալիս
Եվ ի՞նչ տեղեր է ուզում ուխտ գնալ.
Եվ ասինք՝
— Կուզե՞ք ձեզ տանենք Գառնի,
Կուզեք՝ Գեղարդ ու Զվարթնոց գնանք։
Սակայն նա ասաց.—
Չիս տունեն առաջ
Ստալինգրադի քարերուն տարեք,
Չըլլային անոնք՝ Գառնիին նման
Ավե՞ր պիտ ըլլար մեր հողն արդարև...

Կտանե՛նք, սակայն որտեղի՞ց հիմա
Ստալինգրադում ավերակ ճարենք...

1947.

ԴԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԳ

Ամեն գարուն՝ ինչքան ծանոթ,
Այնքան նոր է ու բաղձալի,
Ամեն գարուն մի նո՞ր ձայնով
Ու նո՞ր սիրո պես է գալիս։

— Տե՛ս, հավքերը, երամ-երամ,
Հին բնե՞րն են իրենց դառնում,
Ամե՛ն տեղ են դառնում նրանք՝
Բայց ուրի՞շ է Հայաստանում.

Հայաստանում, նրանց նման,
Պանդուխտ հայե՞րն են ետ դառնում.
Ու բույն հյուսում-որ միշտ մնան
Ծաղկածիծաղ Հայաստանում։

— Տե՛ս, հավաքած փեշերն իրա,
Ձմեռը սա՞ռն է քարձրանում,
Ամե՛ն տեղ է մահը ձմռան՝
Բայց ուրի՞շ է Հայաստանում,

Սևանա լիճն իր ափերից
Ծառս է եղել ու բարձրանում,
Որ քա՞ն անգամ ծաղիկ բերի
Մեր քարաշատ Հայաստանում։

— Տե՛ս, ծաղկո՞ւմ են ծաղկունքը պերճ
Հանգած սերի՞ն իսկ նորանում
Ամե՛ն տեղ է գարունն այսպես՝
Բայց ուրի՞շ է Հայաստանում.

Դարավոր սի՞րտն է հայկական
Իմ աչքերի դեմ մանկանում,
Չէ՛, գարնանն այս՝ աշուն՝ չկա՝
Հավի՞րժ է նա Հայաստանում։

1947.

Բանաստեղծությունները — 6

ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

Սիրոյդ համար լինի անգամ՝ կծաղկի,
Թե այդ նույն սիրով մեզմ սիրեցիր իրար։

ՍԻՐԵՐԳ

Ասա՛, ո՞ւր պիտի փախչես իմ սիրուց
Թե ուզես փախչել անգամ քո սրտից,
Երբ ամեն գիրք քեզ սիրե՞ր դա է բերում,
Ռադիոն քե՞զ կանչում՝ իմ երգը շրթին։

Եթե չար լինի անգամ սիրտը քո,
Սիրով շունչ տված անապատ սրտիդ,
Կդարձնեմ այն կանաչ ու ծաղկող՝
Ինչպես Մուղանի հողերն անջրդի։

Եթե ցուրտ լինի բևեռի նման,
Ճեղքած սառույցը հավիտենական
Սիրույս դրոշը կպարզեմ վրան՝
Ինչպես բևեռում մեր հայրենական։

Եթե աստղ լինես հեռու երկնքում,
Լուսարձակի պես աչքերդս բացած,
Կխառվեմ քո երազը քնքուշ,
Որ գիրկդս ընկնես սիրուց խենթացած։

Թե աշխարհն արար ելնի սև զորքով,
Եվ ուզենա քեզ տանջել ու գերել,
Կփրկե՞մ քեզ իմ սիրատենչ կրծքով՝
Ինչպես փրկեցի մեր հողը երեկ։

Տեսնո՞ւմ ես սիրուց իմ ու մեր երկրի
Ինչպե՞ս ենք ծաղկում երկուսս էլ զվարթ...
Սիրտդ քա՞ր լինի անգամ՝ կծաղկի,
Թե այդ նույն սիրով մենք սիրենք իրար։

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Գիտե՞ք ինչեր կան այս աշխարհում,
Որոնց եղել ենք մենք անհաղորդ.

Խաղաղ մի թաղ կա Երևանում,
Խաղաղ թաղում այդ՝ մի նեղ փողոց,

Նեղ փողոցում այդ՝ մայթեր քարե,
Մայթերի եզրին՝ կանաչ ծառեր,

Ծառերի ներքո՝ քարե մի տուն,
Ուր մի աղջիկ է ապրում ժպտուն։

Աղջիկն այդ ունի զուլալ աչքեր,
Սիրում է կապույտ զգեստ հագնել,

Երազներ ունի պայծառ ու մեծ,
Բայց այնքան լո՞ւռ է, այնքան համեստ,

Որ ո՞չ ոք նրան չէ՛ր իմանա՝
Եթե նա սիրտն իր ինձ չբանար։

Դուք հասկանո՞ւմ եք, զգո՞ւմ եք դուք,
Բայց ինչպե՞ս եք դուք հանդիստ ժպտում,

Ինչո՞ւ ինձ նման չե՛ք զարմանում,
Ինչո՞ւ անտարբեր ձայն չե՞ք հանում

Եվ... թե չգիտե՞ք նրան քնավ
Ինչպե՞ս եք ապրում առանց նրան...

1947.

ԱՆԾԱՆՈԹ ԱՂՋԿԱՆ

Կա մի աղջիկ կապուտաչյա,
Որ ապրում է Երևանում,
Անծանո՞թ է աղջիկն այդ չա՛ր,
Անցորդուհի մի անանուն։

Սակայն ամեն, ամեն անգամ,
Երբ հանդիպում ենք մենք մայթում,
Նա դեմքիս է նայում անթարթ,
Ես՝ աչքերին նրա կապույտ։

Նայում ենք լո՛ւռ, երկա՛ր, երկա՛ր,
Կարծես փնտրում կորած մեկին,
Բայց չե՞մ գտնում ես բարեկամ,
Նա չի՞ գտնում իր փնտրածին.

Եվ անցնում ենք կրկին անփույթ,
Կորցնելով հույսը կրկին,
Ես՝ աչքերում նրա կապույտ,
Նա իմ խաղաղ ու լուռ դեմքին...

Բայց և թվում է երկուսիս,
Թե մի գաղտնիք գիտենք անուշ,
Որ վաղ թե ուշ մեկըս կասի,
Բայց... խոսքերը չի իմանում։

1946.

ԻՆՉ ԼԱՎ Է ՍԻՐԵԼ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ...

Նվարդին

Ինչ լա՞վ է սիրել այս աշխարհում...

Զգալ, որ այստեղ և կամ հեռվում,
Քեզ համար մի տեղ լուսյա է վառվում,

Որ լույս է տալիս՝ ուր էլ գնաս,
Որ կանչում՝ երբ մթնում մնաս,

Եվ դու՛ն ես լույսն այդ լոկ նշմարում...
Ինչ լա՞վ է սիրել այս աշխարհում։

Ինչ լա՞վ է սիրել այս աշխարհում...

Զգալ, որ լույսն այդ հեռո՞ւ հեռվում,
Որին տենչում ես, որով դերվում,

Հեռու չէ՝ անհաս աստղի նման,
Կարող ես գնա՞լ, հասնե՞լ հիմա.

Որ և այրո՞ւմ է և ի՞նքն այրվում...
Ինչ լա՞վ է սիրել այս աշխարհում։
1948. Երևան.

ԾՈՎԱՓՆՅԱ ՊՈՒԲԱԿՈՒՄ

Կա՛ց սիրելիս, ինչպես որ կաս՝
Սիրո կիսատ խոսքը շրթին։
Աշխա՞րհն է մեր սիրո վկան,
Բայց կա՛ց մի պահ...

Խորքից մութի,
Երկու նա՞վ են բաց ծով դնում,
Երկուսն էլ վես ու վիթխարի,
Որ մեզ նման իրար սիրում՝
Միշտ անբաժան են իրարից։
«Ռոզասատա՛նն» է մեկը, նայիր,
Ով «Հաղթանակ» քույրը նրա,
Նրանք բաց ծով են դուրս գալիս,
— Եկ, բարի ե՛րթ մաղթենք նրանց։
Տե՛ս, ամպեր են կիտվում ահեղ
Եվ ամպրոպներ ատոմային,
Մութը՝ կուվի ջահը պահել՝
Մոտենում է մեր սահմանին.
Սակայն նրանք խիզախորեն
Մրրիկների միջով անցած,
Տանում են այս կյանքը նորեկ
Կոմունիզմի ափը պայծառ։
... Փարված նրանց պես իրարու՝
Եկ բարի երթ մաղթենք նրանց.
— Քանի նրանք կա՛ն աշխարհում
Մեր բախտը չի՛ թեքվի քնավ։

1947. *Բաթումի.*

ՈՒԹՆՅԱԿ Ա–ԻՆ

Քանի՞ տարի շրջում ենք մենք
Ոլոր-մոլոր ձեր փողոցում,
Ինչե՞ր ասես չենք խոսում մենք,
Բայց մեր մասին մենք չենք խոսում.
Սերը շո՞ւտ է իրեն մատնում
Ո՞վ չգիտե, որ սիրում ենք...
Այդ չգիտենք լոկ ե՛ս և դո՛ւ
Եվ լռո՞ւմ ենք,
Եվ լռո՞ւմ ենք։

ՆԵՐԻՍԻ ԱՓԻՆ

Եվ նա ինձ ասաց.

— Վի՛ճնյուսը ահա,
Ահա Նե՛րիսը՝ հանդարտ ու խաղաղ՝
Ամռան աստղերի ցոլանքը ջրում.
Իսկ ես ասացի.

— Աչքե՛րդ եմ սիրում։

Եվ կրկին ասաց ջահել Լիտվուհին,
— Նայիր ինչպե՞ս է օրորվում ուռին՝
Լուսնի մահիկը կանաչ վարսերում.
Իսկ ես ասացի.

— Նաղա՞նքդ եմ սիրում։

Եվ նա ցույց տվեց մի օտար ծաղիկ,
Ասաց.

— Ո՞վ լեռան բանաստեղծ, նայի՛ր,
Սա Ռո՛ստան է, սա ծաղի՛կն է սիրո.
Իսկ ես շուտ տվի հայացքիս խոսքով։

Եվ նա լա՛ց եղավ, հանդա՛ռտ, անհնչյո՛ւն,
Եվ հեկեկաց նա՝ չգիտեմ ինչո՛ւ,
Եվ ասաց.

— Մի՞թե Ռուստան չե՛ս սիրում.
Իսկ ես ասացի.

— Ես քե՛զ եմ սիրում։

1946.

ԽԱՆԴՈՏ ԾՈՎԸ

Մենք շրջում էինք քեզ հետ ծովափին,
Եվ ծովն անտարբեր ու լուռ նայում էր,
Սիրտըս ծովի պես՝ քաղցր տագնապից
Մերթ ծփում էր մեղմ,
Մերթ գաղտագում էր։
Եվ տեսավ ծովը տագնապն իմ սրտի
Եվ խանդի թևով ափերը թռավ,
Եվ ուզեց գերել սիրտն իմ պոետի
Եվ տենչաց, որ ես իրենով գերվեմ,
Եվ բարձրանալով ծայրին մատների
Կապույտ թիկնոցը ուսերից նետած
Ոսկեղեն փոշի ցանեց վարսերին
Եվ նայելով ինձ յոթներանգ ժպտաց։
Բայց շրջում էի ես քեզնով գերված
Եվ սիրում էի միայն քե՜զ, անգի՛ն,
Եվ ծովը խանդից խենթորեն հևաց,
Եվ դրած ոսկե թագն արևգակի,
Փլվե՜ց իմ առաջ, ծնկներըս դրկեց
Ինձ հակի՜նթ բերեց ալիքի ձեռքով
Որ մոռանամ քեզ, որ ես քեզ լքեմ,
Որ տարվեմ միայն իր չքնաղ տեսքով,
Բայց ես միայն քե՜զ, քե՜զ էի սիրում
Եվ ժպտում էիր դու՝ հաղթած ծովին
Հպարտ քո սրտի օվկիանով խորունկ
Եվ քո հուլգերի մորիկով թռվիչ։

1946.

ԶԵՑ

Դուք, որ գայլանի պես գրչակոթը ծծում,
Հորինում եք երգեր երկար-բարակ,
Այդ ո՞ւմ հասցեով եք ձեր երգը փոստ դնում
Այս աշխարհում ո՞վ է ձեզ պես պարապ։
Եվ ո՞ւմ, էլ ո՞ւմ են պետք, ձեր՝ ձանձրույթից առաջ
Նեյնիմները՝
«Բլբուլ»,
«Վարդ»
Ու «այգի»
Սովորակա՞ն, ինչպես հորանջ՝ քնից առաջ
Եվ ձանձրալի ինչպես «բարևագիր»։
Հեռագրի նման պիտի երգը լինի
Նրա նման կտրո՛ւկ, կա՛րճ ու ազդու,
Որ բերի մի ցնցող ուրախություն կամ վիշտ
Եվ շեշտակի խրվի սիրտը մարդու,
Որ ամբարած իր մեջ նորությունը պահի՝
Մարդուն գամած իրեն՝ պահի անքուն,
Եվ զորավոր ուժով իր մի երկու բառի
Մի ինչ որ բա՛ն փոխի նրա կյանքում...

Ես այդ ե՛րգն եմ տենչում՝ քուն թե արթուն...

1947.

ԸՆԹԵՐՑՈՂԸ

Նա մի մանո՛ւկ է՝ պայծառ, խլրտուն,
Երազներ ունի իր փոքրիկ սրտում,
Աչքեր ունի նա խորունկ ու մաքուր,
Կապույտ, սատինե բլուզ է հագնում,
Եվ ապրում է իմ կամ ձեր քաղաքում
Մեր գյուղում և կամ մի այլ գյուղակում։
Նա հիմա գուցե ճրագը վառած,
Խելոք աչքերը իմ գրքին հառած,
Տառ-տառ կարդում է իմ գիրքը նորից
Եվ հավատում է իմ ամեն տողին...

Ես չգիտեմ դուք տեսնո՞ւմ եք նրան
Եվ ղգո՞ւմ եք դուք հայացքը նրա
Սակայն քանի նա կա՛ այս աշխարհում,
Իրավունք չունե՛մ ես լինել անուժ,
Իրավունք չունե՛մ լինելու տխուր,
Անհոգ ու անփույթ շրջելու մայթում,
Իրավունք չունե՛մ սիրտս փորփրել
Եվ ինչ որ ուզեմ՝ աջ ու ձախ գրել
Չի հավատո՞ւմ է նա ամեն տողիս
Եվ ես իր համար՝ բարձր եմ իր հորիզ։

Դու լսո՞ւմ ես ինձ, անծանո՛թ մանկիկ,
Կարող ես վստա՛հ նայել իմ աչքին
Ես զգո՞ւմ եմ իմ պարտքը աշխարհում

Եվ քեզ համա՛ր եմ ես հենց պայքարում։
Ես այնպես կանե՛մ, որ քա՛ջ լինես դու,
Խիզախ ու արի՛ լինես նոր մարտում,
Որ վիշտ ու կասկած չունենա՛ս բնավ,
Կյանքում միշտ աղնիվ ու մաքո՛ւր մնաս,
Եվ կուվես այն լո՛ւյս դալիքի համար,
Որի համար մենք կուվո՛ւմ ենք հիմա։

Ների՞ր ինձ, թե ես լացե՛լ եմ հաճախ,
Ու քո տխրության եղել եմ պատճառ,
Ների՞ր, թե մեկ-մեկ հույզերըս ցրել՝
Ես ա՛յն չեմ ասել, ես ա՛յն չեմ գրել.
Չէ՞ որ ինչքան շուտ դու հասնես դալիք,
Քո մեջ ես է՛լ եմ հասնելու, բալիկ,
Եվ ինչ ես մարտի պահին չե՞մ ասել
Պայծառ դալիքում դու իմ տեղ կասե՛ս
Իմ երդերի մեջ՝ վառոդ ու գնդակ
Ջդալով սի՛րտս՝ զարկող կրծքիդ տակ։

ՂԱՓԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ

Ոչ վայլուն կուրծքը Մասիսի,
Որ հայոց աչքերից մաշվել են,
Արագած, ոչ լանջդ գեղեցիկ,
Որ երգի մշուշով ծածկվել է,
Թողած հին պաշտոնը պոետի՝
Գեղեցիկ պճնանքով գերվելը,
Ես երգում եմ անշուք համեստին՝
Երգում եմ Ղափանի լեռները։

***

Գեղեցի՞կ են հայոց լեռները՝
Հավերժի վկաները անմահ,
Ծերպերին սառնաշունչ ձմե՞ռ է,
Լանջերին՝ գարուններ ու ամառ,
Շրջում ենք ես ու իմ ընկերը
Եվ հանկարծ, ելնում է մեր դիմաց,
Լեռների ամենի՛ց տգեղը՝
Անթրա՛շ,

Ճաղա՛տ
Ու կարմրա՛ծ։

Ոչ կանա՛չ ունի նա լանջն ի վար
Ոչ գագա՛թ, որ ամպը ճեղքել է,
Կարծես թե ծերունի է հիվանդ

Որ հոգնած դաշտի մեջ նստել է,
— Մի՞թե սա էլ կասի թե «լեռ եմ»...
Ասում է ընկերս ու հեռանում,
—Ամո՛թ է մեր երկրում այս լեռը՝
Ուր Մասի՛սն է վերև խոյանում։
Ասում է, թողնում ու հեռանում...
Իսկ ե՛ս,
Որ բանաստե՛ղծ եմ կյանքում,
Սակայն միշտ սիրո՞ւմ եմ աշխարհում,
Ինչ անշո՛ւք է՝
Բայց խո՛րն ու մաքո՛ւր,
Շոյո՞ւմ եմ նրա դանդը ճաղատ,
Եղբոր պես նրա ուսը ցնցում
Եվ ձայնի հնչյունից մեստաղյա
Զգո՛ւմ,
Որ նա դանձո՞վ է լեցուն

***

Նա ինձ հետ սրտագին զրուցում,
Բացո՞ւմ է ինձ թաքուն ծալքերն իր,
Աստվա՞ծ իմ, ինչե՞ր կան իր ծոցում,
Ինչ մեծ սի՞րտ ունի այս տգեղը,
Ո՞վ կարող էր տեսնել ու զգալ
Որ Հոգի՞ կա տգեղ այս մարմնում,
Պղի՞նձ կա
Եվ ոսկի՞ կա անգամ,
Որ դրսից աչքը չի նշմարում...
... Ես շիկնո՞ւմ եմ նրա հայացքից,
Եղբոր պես համբուրո՞ւմ եմ նրան,

Այսքան փոքր են թվում իմ աչքին,
Մեր լեռները՝ երգով ծամծմած,
Եվ հոգիս զզջում է ու ցավում,
Որ այսքան թեթև եմ ես եղել,
Եվ թողած սրտերը աշխարհում՝
Պճնանքով ու շուքով եմ գերվել...

Ահա թե ինչո՛ւ ոչ Մասիսի՛ն,
Որ հայոց աչքերից մաշվել է,
Արարա՛ծ, ոչ լա՛նջըդ գեղեցիկ,
Որ երգի մշուշով ծածկվել է,
Ես երգում եմ անշուք համեստին
Երգում եմ Ղափանի լեռները,
Թողած հին պաշտոնը պոետի՝
Գեղեցիկ պճնանքով գերվելը։

ԶՐՈՒՅՑ ՎԵՆՆԵՐԱՅԻ ՀԵՏ

Քայլում են էսթետներն ու իրար ասում են.
—Օ՜, ելթե տեսնեի՜ք,
(Լսրձունքը վազում է...)
—Արվեստի աստվա՜ծ է
— Այդ հի՜ն է, ասվա՜ծ է,
— Դուք տեսե՞լ եք նրան
—Անմի՜տ է ձեր հարցը։
—Ա՜խ ելթե տեսնեիք ինչպիսի հոնքե՜ր են,
—Ոգի՜ է ելթերի...
— Քնա՜ր են կոնքերը...
—Ասում եք գալի՞ս է...
— Արդեն մի ամի՜ս է.
—Թանգարա՜ն են բերել,
— Գնո՜ւմ եմ,
— Գալի՞ս եք։
Լսում եմ, տեսնելու փափագն ինձ այրում է,
Շրկնում է աղջիկն իմ, շփոթված նայում է,
Ես քաշում եմ թեն իր և թողած մայթերը
Թանգարա՜ն եմ մտնում.
— Բայց ո՞ւր է, որտե՞ղ է։
Եվ հանկարծ տեսնում եմ— գեղեցիկ մի կին է,
Աչքիս չեմ հավատում՝ նայում եմ կրկին ես,
Չքնա՞ղ են ձեռքե՜րը, մարմի՜նը, ոտքե՜րը,
Բայց... նայում ու կարծես չե՜ն տեսնում աչքերը։

Ինչ-որ նուրբ դալկություն է լցել դեմքին իր,
Քնա՞ծ է արդյոք, թե՞ հիվանդ է այս կինը,
Ինչո՞ւ է սառել ու աչքն հեռու հառել իր,
Երբ ամբողջ քաղաքը իրենով տարվել է։
Մոտենում եմ զգույշ ու բռնում իր թևը,
Զքնաղ ու պարթև է, բացված են շուրթերը,
Մաշկն ասես մարմա՛ր է—բայց ինչո՞ւ է սառը,
Ժպտո՛ւմ եմ,

Ձե՛ռք տալիս,

Անշա՛րժ է։

Անձա՛յն է։

— Ընկե՛ր չի՛ կարելի— ճչում է էսթետ մի
— Սա գաղա՛ն է վայրի,

— Անտա՛շ է,

— Պոե՛տ է,

— Մոնել սուրբ տաճարն այս ու պղծել արձա՞նը...
— Դո՛ւրս արեք,

— Կորչի՛ թող,

— Անմի՛տ է,

— Ցանցա՛ռ է։

«... Քսան դա՞ր է այսպես կանգնած եմ բարձրո՛ւմ ես,
Բոլորն ինձ մոտենում՝ հիանում, անցնում են,
Իսկ անմիտ պոետն այս՝

— օ՜, ամոթ ու մե՞ղք է,

Շոյո՛ւմ էր մատնե՞րըս,

բռնո՛ւմ էր իմ ձեռքը...»

Ճչում է Վեներա՛ն։

Իսկ ես զուսպ ասում եմ...

—« Մի՞թե այդ, Վեներա՛, ձեր դիրքին սազում է...»
Վեներան լռում է.

Էսթետը գնում է,
Իսկ ես դեռ կանգնած եմ՝
զարմանքից այրվում եմ։
«Ի՞նչ հմայք ունի սա, որ իրեն հլու են,
Էլ ի՞նչն է գեղեցիկ՝ երբ անշարժ ու լուռ է,
Բռնե՞լ վ գեթ մեկը մարմարե այս ձեռքը,
Տվե՞լ է սա մեկին իր սերն ու վայելքը»։
Եվ կամաց, այնպես, որ չլսի էսթետը,
Որ հուզված չասի, թե անտաշ է պոետը,
Մոտենում եմ նրան և զսպած ցասումը
Ոտքերիս ծայրերին բարձրացած ասում եմ..—
— Ասացե՛ք, վենե՛րա, երբևէ սիրե՞լ եք,
Ձե՞ք սիրել, աստվա՞ծ իմ, անգամ չեք գերվե՞լ էլ,
Ասում են, դուք հիմա արվե՛ստ եք, մաքո՛ւր եք
Եվ լոկ կի՞ն կդառնաք՝ թե սիրեք կյանքում այս.
Դուք միայն տալիս եք մեզ սիրո սուրբ կա՞յծը,
Դուք սիրո աստվա՞ծ եք
— Օ՜, լա՞վ է ասված այդ,
Բայց ո՞ւմ են հարկավոր ձեր այդքան գանձե՛րը,
Երբ մարդու կողքով դուք անտարբեր անցե՛լ եք...

. . . . . .

... Ինձ հեռվից կանչում են.—
«— Էմի՜ն, ես գնո՛ւմ եմ»,
Ժպտում է աղջիկն իմ, ձեռքո՛վ է անո՛ւմ ինձ
Վեներան ցնցվում է, Վեներան լացում է,
Իսկ ես ետ եմ դառնում ու կամաց ասում եմ.
— Մի՛ լսի դու սրանց, էսթետը խաբո՛ւմ է,
Դու անմասն ես մնում, երբ քեզնով հարբում են,
Ինչի՞ դ է հաճելի խոսքերի թակարդն այս,

Երբ քո կյանքն իզո՞ւր է, երբ քո սերը՝ զա՛րդ է։
Ա՜յ, այս իմ աղջիկը, տեսնո՞ւմ ես, ժպտում է,
Նա ոչ շիկ արձան է, ոչ աստված՝ կյանքում այս,
Բայց նայիր, թե ինչքա՞ն գերող ու զվա՛րթ է,
Ինչ ջե՞րմ են խոսքերը, ինչ այրող՝ հմայքն իր։
Նա մայթով է քայլում—փոշո՞տ են ոտքերը,
Նա վա՞տ է հագնված, գույնն և տգեղ է,
Բայց երբ մենք իրարու հմայքով արբում ենք՝
Ի՞նչ աստված էլ ուզենք՝ կստեղծենք կյանքում այս։
Իսկ այստեղ դու զա՛րդ ես—էսթետը խաբո՞ւմ է,
Այստեղ սա՛ռն ես դարձել ու այնքան անդուն ես,
Որ ոչ դո՛ւ ես տարվում, ոչ քեզնով տարվում են՝
Ի՞նչ փույթ թե չքնա՞ղ ես և մեծ է անունդդ։
Դողո՞ւմ է Վեներան, հուզմունքով փարվո՞ւմ ինձ,
Մարմարե մաշկի տակ խայտում է արյունը,
Եվ թաքուն իջնելով մարմարե գահի՛ց իր,
Աղերսո՛ւմ է լացով.—
— Տարե՞ք ինձ,
Գալի՞ս եմ...»

. . . . . .

Որտե՞ղ է նա հիմա՝ այդ ի՛նձ էլ գաղտնիք է,
Գուցե նա իմ սե՛րն է, գուցե քո աղջի՛կն է,
Բայց ուր էլ լինի՛ նա՝— թե սիրտը զարկո՛ւմ է՝
Էլ երբեք էսթետից չի՞ խաբվի կյանքում այս։
... Ինչ փույթ թե էսթե՛տներն անօգուտ ճչում են.
— Որպիսի՞ մեծ կորուստ,
— Արվեստը կորչո՞ւմ է,
— Արվեստի աստվա՞ծ էր
— Ահավո՛ր հանցանք է,

— Կգտնե՞ն էլ նրան,
— Անմի՞տ է ձեր հարցը...
Ես լսո՛ւմ եմ նրանց՝ ծիծաղը սրտո՛ւմ իմ,
Նայում է ինձ սերը՝ խորամանկ ժպտում է,
Մենք սիրո՞ւմ ենք իրար և գիտե՞նք իր տեղը՝
— Որտեղ որ սիրում են՝ Վեներան այնտե՛ղ է։

1946. Վիլնյուս

ՀԻՆ ՇԵՆՔԸ

Նոր պողոտան ելել, դեմ էր առել մի տան,
Գեղեցիկ էր տունը, կամարակապ, շքեղ,
Ես տուն էի դառնում պողոտայով շտապ,
Երբ տան դռնից մի մեխ իմ քլուզից ձգեց.—
— «Ինչ լա՞վ էր, որ տեսա—տունը կամաց ասաց,
Չե՞ս մոռացել դու ինձ, հիշո՞ւմ ես ինձ էլի
Քանի՞ քանի անգամ իմ դռան մոտ հասած՝
Կապվել է քո ոտքը հույզի անտես թելից։
Նա այստե՞ղ էր ապրում... Քանի՞ քանի անգամ,
Դու սուլել ես նրա պատուհանի առաջ,
Ների՞ր, խոսքերս այսօր ցրված են ու անկապ.
Սակայն, պոե՛տ ես դու, դու ինձ կհասկանաս։
Ինձ քանդո՞ւմ են,
Այո՛,
Ես էլ չեմ հավատում,
Բայց ասացին հաստատ, այո՛, ո՛չ մի հանաք,
Երկու բանվոր արդեն ցանկապատն են քանդում,
Դու պոե՛տ ես կյանքում.
Դու ինձ կհասկանաս։
Ես ի՞նչ, ես ի՞նչ ասեմ, որ ինձ զգա՛ն, փրկե՛ն,
Որ տեսնեն թե ո՞վ է կանգնած իրենց առաջ
Մի՞թե դու չես տեսնում իմ զարդերը շքեղ
Իմ սյուները ողորկ, խոյակներն իմ առատ,
Դու պոետ ես կյանքում, դու իմ փիշտը կզգաս,
Լա՞վ, փողոց են ուզում՝ թող փողոցը բացեն,

Ի՞նչ անենք, որ մի քիչ ես մնջտեղ եմ ընկած,
Չի՞ կարելի մի տեղ... շրջանցել ու անցնել... »
Ես լսում եմ նրան, և սակայն ի՞նչ ասեմ...
Շրջապատել են ինձ քանվորները ջլուտ,
Մարդ շենքի հետ խոսի՞—այդ որտե՞ղ են տեսել,
Սմաչում եմ նրանց հայացքներից, լռում,
(Եվ ի՞նչ ասեմ նրան. .
Նա դեռ քա՞ր է անշունչ,
Չէ՞ որ նրա նման հաճախ մարդի՞կ անդամ,
Իրենց զարդն են գովում ու մեծամիտ ճչում,
Չզգալով, որ իրենց դեմ է առել ճամփան...)
— «Ինժինները դո՞ւ ես,
Էս ե՞րբ պիտի քանդենք!»
Սթափվում եմ,
Նայում,
Բանվոր է մի ջահել,
Չինվորական մաշված մի բլուզ է հագել,
Ավտոմատի նման քլունգը պինդ պահել,
— Ինժինե՞րը, այո՛,
Ե՛ս եմ,—ասի հանկարծ,
—«Իսկ ի՞նչ էր այս պառավ շենքն ախ ու վախ
քաշում».—
— «Իր զարդե՞րն է գովում՝ զարդով ճամփան փակած,
Քանդե՛ք,
Պոե՛տ լինի թե շե՛նք լինի անշունչ»։

1947

ՍԵՎԱՆԳԻՍ

Հնագետ Ն-ին

Դու սովորե՞լ ես կածանին այս հին...
Դու տատապելով ասֆալտի՛ շնչից,
Թողնում ես այս լայն ու նոր խճուղին,
Եվ թեքվելով նույն կածանով չնչին,
Տենչալով ցույց տալ երկիրը հայոց
Եվ կոթողները նրա հանճարեղ,
Գնում ես դեպի Գառնին հեթանոս,
Գնում ես դեպի Գեղարդը քարե.
Ես ուզում եմ քեզ այսօր խանգարել...
Ես՝ անդիտակ քո գիտական գործին,
Ուզում եմ այսօր քեզ Սևան տանել
Դու համաձա՞յն ես,
Կեղծել մի՛ փորձիր։
Ահա Սևա՛նը,
Բայց ի՞նչ պատահեց
Դու կարծես ինձնից ավելի՞ ես գոհ,
Կրկին գտած մի փոշոտ արահետ
Եվ ստուգած այն պատմության գրքով,
Բարձրանո՞ւմ ես հին այս կղզին ի վեր
Պատմելով վեպը «Սևանա վանուց»...
Կրկին ուզում եմ ես քեզ խանգարել՝
Ես ուրի՞շ տեղ եմ քեզ այսօր տանում։
— «Ալլո՛, ինժիներ, երկու հատ բաճկոն

Եվ երկու գույդ էլ ուտինեն կոշիկ,
Ես ուզում եմ մի շատ պարզ հրաշքով
Սրբել այս մարդոց հնության փոշին...
... Թանձր խավարում չենք տեսնում ոչինչ
Լոկ վերելակն է ուրախ ճռնչում,
Սղյամ է պատում մեր ջերմին շնչին
Եվ թունելից պաղ քամի է փչում։
Թարթում են մթնում լույսերը մեկ-մեկ,
Փայլում է մի դեմք, մի ջլոտ բազուկ
Մեկը երգում է հեռվում ինչ որ երգ
Եվ երգը մեզ հետ ներքև է վազում։
... Ահա և հասանք մենք «Գեղարդը սուրբ».
Բայց ինչո՞ւ ապշած դեմքիս ես նայում,
Տեսե՞լ ես այսպես Գեղարդ երազում,
Այսքան վիթխարի, այսքան սրբանուն։
Վիմափո՞ր էր նա՝ Գեղարդը քո սուրբ
— Տես ի՞նչ ժայռեր են պեղել ու անցել,
Գեղարդում ջրի ավազա՞ն կար սուրբ.
— Բայց ո՞ր վանքում է ջուրը լույս դարձել.
Աստծո համա՞ր էր Գեղարդը պեղվել
Ո՞վ տեսավ նրան, ո՞վ է հավատում,
— Լույսի տաճա՛ր է սա մեր հրեղեն,
Որ մարդը շինել՝ ձոնել է մարդուն։
Հավատացյա՞լ ես որոնում այստեղ...

— Դու ծանո՞թ ես այս ջահել բանվորին,
Հանուն գալիքի հավատին անթեք
Եվ կոմունիզմի հավատին խորին,
Նա երեկ անցավ կրակի միջով,
Մի ոտքը կռվի դաշտում կորցրեց,
Եվ ճեղքում է այս ապառաժը չոր,
Որ մեր ձեռքերով մեզ դրա՛խտ շինենք։
— Դու վիմագիր ես որոնում պատին,
Որ վերածես ու հոդվածնե՞ր գրես...
Երկիրը մե՛ղ է վստահել պատիվ,
Գնա՛նք,
Այդ մասին մե՛նք պիտի գրենք։

1947.

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Աղմուկ էր իմ շուրջը, աղաղակ ու ժխոր
Եվ հոգիս աղմուկից նեղվո՛ւմ էր,
Խեղդամահ էր եղել կայարանը ծխով
Եվ մարդկանց քայլերից հևում էր։
Բայց հնչեց զա՛նգն ահա
Առաջին... և երրորդ.—
Խավարում շչակը զիլ սուլեց,
Աղմուկը հեռացավ գնացքի հետքերով
Եվ կրկին կայարանը լռեց։
«Խե՛ղճ, փոքրի՛կ կայարան,
Հազի՛վ նա ազատվեց
Աղմուկից, որ նեղում էր նրան,
Ուրա՛խ է երևի և հանգիստ է արդեն»
— Աչքերդ լո՛ւյս,
Ասում եմ ես նրան։
Եվ հանկարծ,
Օ՜, զարմանք,
Տեսնում եմ նա լո՛ւռ է,
Ոչ թե լուռ՝ սդի մեջ թաղվել է,
Խավարե՛լ է լույսը,
Հառաչում է դուռը
Եվ վշտից սյուները ծալվել են։
Ես խոսել եմ ուզում
Բայց նա ինձ կանխում է

— «Մի՞թե այդ քո տեսքին վայել է
Չդիտեմ ո՞վ ես դու,
Եվ ի՞նչ մարդ—կյանքում այս
Բայց այնպե՞ս անհոգ ու,
Ջահե՞լ ես...»
— Իմ կյանքը...
Դու գիտե՞ս, գիտե՞ս ո՞րն է կյանքն իմ
Չգիտե՞ս,
Լսի՞ր ինձ, լսի՞ր ինձ,
Իմ կյանքը ա՛յն է, երբ գալիս է գնացքը
Հևալով փաթաթվում վզին իմ։
Երբ լցվում են իմ մեջ,
տրորո՛ւմ, աղմկում,
Եվ տանում՝ ինչ ունեմ հոգում իմ
Հուշ լինի, թե հանգիստ,
Մի պուտ ջուր և կամ քուն՝
Ինչ մարդու մի բանով օգնում է։
Իսկ հիմա, ո՞ւմ եմ պետք
Եվ ինչի՞ համար եմ
Ինչքան էլ անդորր ու մաքուր եմ,
Երբ դուռը կարծես թե դամբանի կամար է
Ես՝ մենակ ու անգործ կյանքում այս։
Այսպիսի պահերին այնպես սիրտն իմ սև՛ է,
Որ չէի՞ դիմանա ես կյանքում,
Թե հույսը չերկարեր՝ ինչպես այս ռելսերը
Որոնք ինձ կյանքի հետ են կապում։
Ես անհա՛յտ եմ, չնչին, ուղիում այս անծիր՝
Բայց կյանքի երակի վրա՛ եմ,
Լինել շիկ ու չքնաղ՝
Բայց հեռու այս գծից

— Ա՛յ թե ո՞րն է կորուստն ու մահը։
Չգիտեմ ո՞վ ես դու
Բայց այնքան հիմա՞ր ես...»
Եվ հանկարծ, գիշերվա ականջում
Կարոտով ծո՞ր տվեց գնացքի զիլ ձայնը
Որ հոգնած «կայարան» էր կանչում։
Նա շարժում էր հեռվից թաշկինակն իր ծխե
Մոտենո՛ւմ,
Մոտենո՛ւմ,
Մոտենո՛ւմ,
Եվ ինչքան մոտենում՝ կայարանն այնքան խենթ
Եվ այնքան գեղեցիկ էր դառնում։
Ահա նա ողջունեց գնացքին զանգաձայն
Ճիչ,
Աղմուկ,
Աղաղակ
Ու ժխոր,
Փայլեցին լույսերը,
Դռները լայնացան
Նա լցվեց քրքիջով ու ծխով։
—«Չգիտեմ ո՞վ ես դու,
Բայց այնքան հիմա՞ր ես...»
Ես ելա ու գնացք բարձրացա...
— Հիմա ես գիտե՛մ թե կյանքն ինչի՛ համար է
Ես գիտե՛մ ճանապարհն իմ պայծառ։
1947.

ԶՄԵՌՆ ԱՅԳՈՒՄ

Փչեց ձմեռվա առաջին քամին,
Եվ սրսրթացին ծառերը ցրտից,
Շուտով ձմեռը վար կիջնի սարից,
Ձյունը կնստի ծառին ու թփին։

Եղյա՜մ է նստել ծառերի ճյուղքին,
Բայց տես, ինչ գո՛հ ու հանգի՜ստ են նրանք...

... Ով իր ողջ միրգը տվել է կյանքին՝
Մահվան ձյո՜ւնն անգամ չի՛ սարսի նրան։

1947.

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԸՆԿԵՐՈՋՍ

Դո՛ւ, հին վանքերի քնքուշ սիրահար,
Մեր կոթողները ե՛ս էլ եմ սիրում.
Հին վանքերն ի՛նձ էլ եղել են վահան,
Երբ նորի մասին նոր երգ չէ՞ր գրվում։

Ես սիրում եմ մեր կոթողները հին,
Բայց ամենից շատ ես ա՛յն եմ սիրում,
Երբ ամեն զոհված կոթողի շիրմին
Որպես հուշարձան մենք նո՛րն ենք շինում։

Իսկ դու պեղո՞ւմ ես շիրիմները հին
Եվ մասունքով ես միայն հիանում...
Թե նախնիք հինը քեզ պե՛ս սիրեին
Ո՞վ կկառուցեր վանքերն այս հնում։

1947.

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանին

Եղբայրնե՛ր, եկեք շիրիմ չփնտրենք,
Եվ չմտածե՞նք ինչպես է եղել,
Զանգո՞ն է նրան մի գիշեր խեղդել,
Թե՞ Մասիս լեռան լանջին է մեռել,
Զոհվել է դավի անձայն գնդակի՞ց,
Թե՞ սև կառեթով զնդան գնացել...
Ինչո՞ւ զուր քայլել մահվան սև հետքից
Երբ կենդանի է ինքը մնացել։
Բազո՞ւմ են մահվան ճամփաները կեռ,
Անմահությունը՝ մե՛կն ունի միայն.
Մեռած չէ՞ր կարող նա այնտեղ ընկնել
Էլ ինչո՞ւ մահվան հետքերով գնալ։
Դու չե՞ս հավատում, նայի՛ր, բարեկա՛մ,
Ես քեզ ցույց կտամ կյանքն Աբովյանի,—
Ահա օրոցքը նրա մանկական,
Ահա երգ դարձած վերքն Հայաստանի,
Մասի՛սը ահա, որի բարձունքից
Նա առաջինը մեծ Ռուսիան տեսավ.
Ամե՞ն, ամե՞ն ինչ կա Նրա կյանքից
Լոկ մի՛ բան չկա — չկա գերեզման...
Էլ ինչո՞ւ սեղմենք մեծ կյանքը նրա
Օրորոցի ու շիրմի արանքում...
Ծնվել, ու հավետ կենդանի մնալ
Ո՞վ չէր երազի մեզանից կյանքում։

1948. IX

ԱՌՈՒՆ

Մի փոքրիկ առու, քրտնած, հևիհև,
Թփից-թուփ անցած այգի է ջրում,
Խշշում է գետը շառաչով ահեղ
Ջոր ժայռերի մեջ անօգուտ գնում։

Ի՞նչ փույթ թե գետի ձայնն է լոկ լսվում
Եվ հորդ է գետը և ունի անուն,.

... Փառք նրանց, որոնք անտես, անշշուկ,
Մի կաթիլ ջրով մեծ դործ են անում։

1947.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմ գործը

	էջ
Իմ գործը	5
Երազ	7
Պարտքը	9
Անցորդը	11
Գարնանային երգ	13
Հոկտեմբերին	15
Մայիսյան ապստամբության զոհերի շիրիմի առաջ	17
Խարույկը	18

Զինվորի օրագրից

Պատերազմի դաշտում	23
Զինվորի վերադարձը	24
Երգեր գրված գնացքում	26
Բալլադ պարտիական անդամավճարի մասին	27
Զրույց մորս հետ	30
Տեքստիլ գործարանում	35
Սարյակները	36
Օտտո Շուլցի ագարակում	38
Կրակը	45
Զրույց գերմանացի գերու հետ	48
Երգ Հայրենիքի և մոր մասին	53
1) Երեք զրույց օտարերկրացու հետ	55
2) Հոգնությունը	57
3) տարիների «բեռը»	59
Ես ձեզ եմ դիմում, աշխարհի մարդիկ	60

Պանդուխտների վերադարձը

Ձեռքը 65
Բալլադ ձկնորսի մասին 68
Արազի ափին 72
Հայրենադարձի նավերը Բոսֆորում 73
Կույրը 75
Երգեր գրված Երևանի կայարանում 77
Գարնանային երգ 80

Սիրո երգեր

Սիրերգ 85
Հայտնություն 87
Անծանոթ աղջիկ 88
Ինչ լա՜վ է սիրել այս աշխարհում 89
Մովափնյա պուրակում 90
Ութնյակ Ռ-ին 91
Ներիսի ափին 92
Խանդոտ ծովը 93

Երգի հետքերով

Ձեզ 97
Ընթերցողը 98
Պափանի լեռները 100
Զրույց Վեներայի հետ 103
Հին շենքը 108
Երկաթուղային կայարանում 113
Ամեն այգում 116
Ճարտարապետ ընկերոջս 117
Անմահություն 118
Առում 119

Գատ. խմբագիր՝ Գ. Բոյան
Տեխ. խմբ – Ս. Լաթոյան
Կոնտրոլ ս. բագրիչ՝ Վ. Դաքեսյան

ՎՖ 01635 պատվեր 694, տիրաժ 3000:
Տպագրված 6¾ մամ.
Հանձնված է արտադրության 10/IX 48 թ.
Ստորագրված է տպագրության 30/III 49 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և հրատարակչ.
վարչ. № 1 տպարան, Երևան, Լենինի փողոց № 65.

ԴԻՆԸ 7 Ռ. 50 Կ.